

# ԻՐԱՎԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ



## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

2019  
N 2 (48)

### Գիտական հանդես

Հրատարակվում է 2008 թվականից  
Լույս է տեսնում տարեկան 2-4 անգամ

Հիմնադիր և հրատարակիչ՝ «Իրավական կրթության և վերականգնողական  
ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ

Գլխավոր խմբագիր՝ Աշոտ Հայրապետյան - իրավաբանական գիտությունների  
թեկնածու, դոցենտ

Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Վերատպելը միայն հանդեսի խմբագրության թույլտվությամբ:

Խմբագրության կարծիքը միշտ չէ, որ համընկնում է հեղինակների կարծիքի հետ:

Գովազդային նյութերի բովանդակության համար խմբագրությունը  
պատասխանատվություն չի կրում:

Հեղինակային նյութերը վերանայվում են և չեն վերադարձվում:

«Արդարադատություն» գիտական հանդեսն ընդգրկված է Հայաստանի  
Հանրապետության բարձրագույն որակադրման կոնխտեի (ՀՀ ԲՈԿ) սահմանած  
դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների  
և դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական  
հրատարակությունների ցուցակում:

Խմբագրության հասցեն՝ 375008, ք. Երևան, Մ. Խորենացու 162ա,  
հեռախոս՝ 574406

Փաքը՝ 574453 էլ. լայպ՝ [www.ardaradatutyunjournal.com](http://www.ardaradatutyunjournal.com)

Հանձնված է տպագրության 12.07.2019թ.

Տպագրությունը՝ լազերային-թվային, ֆորմատ A4:  
Տպաքանակը՝ 100 օրինակ:

Լրատվական գործունեություն իրականացնող «Իրավական կրթության  
և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ

Հասցեն՝ ք. Երևան, Մ. Խորենացու 162ա

Գրանցման վկայական՝ N 278.210.03426, գրանցված ՀՀ արդարադատության  
նախարարության պետական ռեգիստրի Երեքունու տարածքային բաժնի կողմից:

EDITORIAL BOARD

**Արտակ Ասատրյան –**Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի առաջին տեղակալ, իրավաբանական գիտությունների թեկնածու, խմբագրական խորհուրդի նախազան:

**Artak Asatryan** – (President) First Deputy Minister of Justice of the Republic of Armenia, PhD in Law.

**Աշոտ Հայրապետյան –**«Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ տնօրեն, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոկտոր, գլխավոր խմբագիր:

**Ashot Hayrapetyan** – “Legal Education and Rehabilitation Programs’ Implementation Center” SNCO, PhD in Law, Associate Professor, Chief editor.

**Հրանուշ Հակոբյան –**Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

**Hranush Hakobyan** – Doctor of Law, Professor.

**Արմեն Հարությունյան –**Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

**Armen Harutyunyan** – Judge at the European Court of Human Rights, Doctor of Law, Professor.

**Աշոտ Խաչատրյան –**Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի դատավոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

**Ashot Khachatryan** – Judge at the Constitutional Court of the Republic of Armenia, Doctor of Law, Professor.

**Վոլոդյա Հովհաննիսյան –**Իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ:

**Volodya Hovhannisyan** – Doctor of Law, Associate Professor.

**Արմեն Եսայան –**Հայաստանի Հանրապետության արդարադատության երրորդ դասի պետական խորհրդական, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

**Armen Yesayan** – Third Class State Advisor of Justice of the Republic of Armenia, Doctor of Law, Professor.

**Գրիգոր Բադիրյան –**Իրավաբանական գիտությունների դոկտոր:

**Grigor Badiryan** – Doctor of Law.

**Ստեփան Շաղիկյան –**Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի իրավունքի և քաղաքականության ինստիտուտի քրեական և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

**Stepan Tsaghikyan** – Head of Criminal and Criminal Procedural Law of the Law and Politics Department of the Russian-Armenian (Slavonic) University, Doctor of Law, Professor.

**Սերգեյ Առաքելյան –**«Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ ռեկտոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

**Sergey Arakelyan** – Rector of “Academy of Justice” SNCO, Doctor of Law, Professor.

**Ռուզաննա Հակոբյան –**«Գավառադատության ակադեմիա» հիմնադրամի ռեկտոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ:

**Ruzanna Hakobyan** – Rector of “Gavar State University” Fund, Doctor of Law, Associate Professor.

**Ժորա Զհանգիրյան –**«Գլաձոր» համալսարանի ռեկտոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

**Zhora Jhangiryan** – Rector of “Gladzor” University, Doctor of Law, Professor.

**Ռուբեն Ավագյան –**«Մանց» համալսարանի ռեկտոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

**Ruben Avagyan** – Rector of “Manc” University, Doctor of Law, Professor.

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

**Արփինե Հովհաննիսյան** – Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ:

**Arpine Hovhannisyan** – PhD in Law, Associate Professor.

**Սուրեն Քրմոյան** – Իրավաբանական գիտությունների թեկնածու:

**Suren Krmoyan** – PhD in Law.

**Գրիգոր Մինասյան** – «AM» իրավաբանական ընկերության կառավարիչ, իրավաբանական գիտությունների թեկնածու:

**Grigor Minasyan** - Manager of “AM” Law Firm, PhD in Law.

**Սերգեյ Հայրապետյան** –Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

**Sergey Hayrapetyan** – Doctor of Historical Sciences, Professor.

**Աշոտ Ենգոյան** – ԵՊՀ-ի միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի վարիչ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

**Ashot Engoyan** – Head of Chair/Faculty of International Relations-Chair of Theory and History of Political Sciences of YSU, Doctor of Political Sciences, Professor.

**Գարիկ Քերյան** – ԵՊՀ-ի միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի վարիչ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

**Garik Keryan** – Head of Chair/Faculty of International Relations-Chair of Political Institutions and Processes of YSU, Doctor of Political Sciences, Professor.

**Մուշեղ Հովսեպյան** – ԵՊՀ-ի ժուռնալիստիկայի ֆակուլտետի տպագիր և հեռարձակվող լրատվամիջոցների ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

**Mushegh Hovsepyan** – Head of Chair of Printed and Broadcast Media of YSU, Doctor of Philological Sciences, Professor.

**Էդուարդ Ղազարյան** – Հայաստանի ազգային ազրաբային համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր:

**Eduard Ghazaryan** – Dean of the Economics Faculty of National Agrarian University of Armenia, Doctor of Economics, Professor.

### Օտարերկրյա անդամներ

#### International members

**Հայկ Կուպելյանց** – Իրավաբանական գիտությունների թեկնածու:

**Hayk Kupelyants** – PhD in Law.

**Ալեքսանդր Կրիմով** – Ռուսաստանի Դաշնության պատմինների իրականացման դաշնային ծառայության իրավունքի և կառավարման ակադեմիայի պետ, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ, ներքին ծառայության գեներալ-մայոր:

**Aleksandr Krimov** – Head of the Academy of Law and Administration of the Federal Penitentiary Service of the Russian Federation, Doctor of Legal Sciences, Associate Professor, General-Major of Internal Service.

**Անդրեյ Սկիբա** – Ռուսաստանի Դաշնության պատմինների իրականացման դաշնային ծառայության իրավունքի և կառավարման ակադեմիայի իրավաբանական ֆակուլտետի քրեականարդական իրավունքի ամբիոնի պետ, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ, ներքին ծառայության մայոր:

**Andrey Skiba** – Head of Chair of Criminal and Executive Right of Legal Faculty of the Academy of Law and Administration of the Federal Penitentiary Service of the Russian Federation, Doctor of Legal Sciences, Associate Professor, Major of Internal Service.

**Եվգենի Բարազ** – Ռուսաստանի պետական քրեականարդական ծառայության ինստիտուտի պետ, ներքին ծառայության գեներալ-մայոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ:

**Evgeniy Barash** – Head of the Criminal and Penal Service Institute, General-Major of Internal Service, Doctor of Legal Sciences, Associate Professor.

**Հենրիկ Լինդեբորգ** – Ֆինլանդիայի արդարադատության նախարարության քրեական պատիժների վարչության ավագ գիտաշխատող, սոցիալական գիտությունների դոկտոր:

**Henrik Lindeborg** – Senior Researcher at the Criminal Punishment Department of the Ministry of Justice of Finland, Doctor of Social Sciences.

**Նիկիտա Իվանով** – Համառուսական արդարադատության պետական համալսարանի քրեական իրավունքի և կրիմինալոգիայի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

**Nikita Ivanov** – Head of the Chair of Penal Right and Criminology Doctor of Legal Sciences, Professor of the All-Russian State University of Justice.

**Սերգեյ Չերնյավսկի** – Ուկրաինայի ներքին գործերի Ազգային ակադեմիայի պրոռեկտոր, Ուկրաինայի գիտության և տեխնիկայի պատվավոր գործիչ, ոստիկանության գնդապետ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

**Sergey Chernyavsky** – Vice Rector of the National Academy of Internal Affairs of Ukraine, Honored Worker of Science and Technology of Ukraine, Police Colonel, Doctor of Legal Sciences, Professor.

**Վադիմ Վինոգրադով** – Համառուսական արդարադատության պետական համալսարանի սահմանադրական և միջազգային իրավունքի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

**Vadim Vinogradov** – Head of the Chair of Constitution and International Right, Doctor of Legal Sciences, Professor of the All-Russian State University of Justice.

**Վլադիմիր Գորեև** – Համառուսական արդարադատության պետական համալսարանի քաղաքացիական դատավարության և դատական կարգադրիչների ծառայության կազմակերպման ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ:

**Vladimir Gureev** – Head of the Chair of Civil Process and Organization of Service of Bailiffs Doctor of Legal Sciences, Associate Professor of the All-Russian State University of Justice.

**Կոնստանտին Գուսարով** – Ուկրաինայի Յարովավ Մուտքի անվան ազգային իրավաբանական համալսարանի քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

**Konstantin Gusarov** – Head of the Chair of Civil Process of the Yaroslav Mudryi National Law University, Doctor of Legal Sciences, Professor.

**Վիտալի Ստոկանով** – «Բելառուսի Հանրապետության ներքին գործերի նախարարության ակադեմիա» կորպական հաստատության հոգեբանության և մանկավարժության ամբիոնի պրոֆեսոր, մանկավարժական գիտությունների դոկտոր, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ:

**Vitaly Stukanov** – Professor of the Chair of Psychology and Pedagogics of the Academy of the Interior Ministry of the Republic of Belarus, Doctor of Pedagogics Sciences, PhD in Psychology, Associate Professor.

**Ալեքսանդր Ռուբիս** – «Բելառուսի Հանրապետության ներքին գործերի նախարարության ակադեմիա» կորպական հաստատության քրեական դատավարության ամբիոնի պրոֆեսոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

**Aleksandr Rubis** – Professor of the Chair of Criminal Process of the Academy of Interior Ministry of the Republic of Belarus, Doctor of Legal Sciences, Professor.

#### ԽՄԲԱԳ-ՐԱԿԱՆ ՎԱՐՉԱԿՆԵՐ

**Արմեն Օհանյան** (պատասխանատու քարտուղար), **Սիրվա Արիստակեսյան** (տեխնիկական խմբագիր), **Անուշ Հայրումյան** (սրբագրիչ), **Սամվել Արքահամյան**

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ****6 ՎԱՀԵ ԹՈՐՈՍՅԱՆ**

Աշխարհիկ և հոգևոր իշխանությունների բաժանման պատմաիրավական շարժառիթները հնագույն իրավունքի հոլովածանների խորապատկերում

**11 ԶՈՀՐԱԿ ԱՊՐԵՍՅԱՆ**

Ամուսնու՝ պետական գրանցում պահանջող սեփականության իրավունքի ծագման պահը

**15 ԻԶԱՔԵԼԼԱ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ**

Աշխատանքի ազատ ընտրության իրավունքի սահմանադրական ամրագրման հիմնահարցերը մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկայի տրամաբանության շրջանակում

**20 ՎԻՐԱԲ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

Մեղքի սկզբունքի և պատժի համաշափության սկզբունքի սահմանադրաիրավական ամրագրման նախադրյալները

**25 ԱՐՄԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Վնասի հատուցման հիմնական իրավունքի սահմանադրաիրավական բովանդակության հիմնահարցերը

**33 ԱՆՆԱ ՄԿՐՏՉՅԱՆ**

Քաղաքացիական հարաբերություններում իրավունքի ինքնապաշտպանության պայմանները

**42 НАТАЛЬЯ МАКАРЕНКО**

Профессиональный преступник: криминологическая характеристика и результаты социологического мониторинга

## ՎԱՀԵ ԹՈՐՈՍՅԱՆ

Եվրոպական համալսարանի իրավագիտության ամբիոնի դասախոս,  
իրավաբանական գիտությունների թեկնածու

### **ԱՇԽԱՐՀԻԿ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺՄԱՍԱՆ ՊԱՏՄԱԿԱՎԱԿԱՆ ԾԱՐԺԱՌԻԹՆԵՐԸ ՀՆԱԳՈՒՅՆ ԻՐԱՎՈՒՔԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԽՈՐԱՊԱՏԿԵՐՈՒՄ**

Հոդվածում ներկայացվում են աշխարհիկ պետության գաղափարի ակունքներում առանցքային նշանակություն ունեցող գործընթացի՝ աշխարհիկ և հոգևոր իշխանությունների տարածատման պատմահրավական նախադրյալները հնագույն իրավունքի հուշարձանների լույսի ներքո: Հետազոտության մեջ վեր են հանդում պատմական և իրավական այն նախապայմանները, որոնք հանգեցրին երկու ինքնուրույն ոլորտների սահմանագատմանը՝ դրանով իսկ նպաստելով արդի ժամանակների ժողովրդավարական պետությունների անկյունաքարը համարվող ֆենոմենի՝ աշխարհիկ պետության գաղափարի սկզբնավորմանը:

**Հիմնարարեր - աշխարհիկ պետություն, աշխարհիկ և հոգևոր իշխանությունների տարածաշատում, կրոնի ազատություն, իրավունքի հուշարձաններ:**

Մարդկության պատմության կարևորագույն նվաճումներից է աշխարհիկ պետության գաղափարը, որն իր մեջ անվիտելով այնպիսի հայեցակարգային առաջնահերթություններ, ինչպիսիք են՝ պետության և եկեղեցու տարածատումը, մտքի, խղճի և կրոնի ազատության երաշխավորումը, ներկայում առավելապես դիտարկվում է, որպես ժամանակակից աշխարհի զարգացման հիմնական ուղենիշներից մեկը: Թեև եզրույթն ինքնին, առավելապես, նոր ժամանակների ծնունդ է, սակայն նորա խորքում ընկած արժեքանությունն իր մեջ կրում է դարերի և հազարամյակների կնիքը: Հետևաբար, աշխարհիկ պետության գաղափարի իրավարնկալման և հետագա համապարփակ ուսումնասիրման համար հարկավոր է ամենից առաջ բացահայտել աշխարհիկ և հոգևոր իշխանությունների, ապա նաև պետության և եկեղեցու առանձնացման պատմահրավական շարժադիրները, դրանց ծագման ելակետերը և հետագա զարգացման ուղիները:

Հարկ է նշել, որ աշխարհիկ և հոգևոր իշխանությունների առանձնացումը մարդկության պատմության ամենառուշագրավ և բեկումնային իրադարձություններից մեկն է: Այն իրքը պատմական գործընթաց՝ հասունացած և որույն կերպ ստացավ ժամանակի պահանջների հրամայականով, որոնք բխում էին արդյունավետ կառավարման և ներդաշնակ համակեցության անհրաժեշտությունից: Միամիտ լավատեսություն ցուցաբերած կլինենք, եթե փորձենք ստույգ արձանագրել այդ գործընթացի մեկնարկը կամ տեղորշել այն վայրը, որտեղ առաջին անգամ տեղի է ունեցել աշխարհիկ և հոգևոր ոլորտների դիխոտոմիան (երկարուղավորումը): Սակայն,

պատմահրավական դեպքերի և զարգացումների, ինչպես նաև դրանց էությունը և ընթացքը մեզ լուսաբանող իրավական հուշարձանների ուսումնասիրության շնորհիվ կարող ենք հստակ բացահայտել այն շարժադիրները և նախադրյալները, որոնք հանգեցրել են իշխան իրողությանը և այդպիսով բեկել պատմության զարգացման հունը: Այս առումով՝ հարկ է գիտնականի մանրախույզ լապտերով անցնել պատմության հեռավոր խորքերը՝ դեպի շումերական, հնդկական, բարելոնյան քաղաքակրթությունների հեռավոր ակունքները:

Հազորյան շրջանի հայտնի փաստերի համայիր վերլուծությունը քույլ է տալիս պնդել, որ սկզբնապես, հոգևոր և աշխարհիկ ոլորտները, միաձուլված լինելով մեկ իշխանության ներքո, ունեցել են իրենց քննորոշ գործառույթները և փոխադարձ կերպով ներազդել միմյանց վրա: Աշխարհիկ իշխանությունը, որպես կանոն, սրբազործվել է հոգևոր-կրոնական սահմանումներով, իսկ միապետը, տնօրինելով նաև հոգևոր ոլորտը, միաժամանակ, հանդես է եկել որպես հոգևոր առաջնորդ: Այն հանգանանքը, որ հնագույն Շումերում արքաները կրում էին Էնսի տիտղոսը, ցույց էր տալիս նրանց պատկանելությունը քրմական դասին, որից հետևում էր, որ արքան գերազույն քուրմն էր: Այս ժամանակներից էլ, հավամարար, սկսվում են թագավորական իշխանության աստվածային ծագման գաղափարները: Այդ տեղեկություններին մենք հանդիպում ենք քաղաքակրթությունների ձևակորման ժամանակներից մեզ ժամանգություն հասած իրավունքի աղբյուրներում:

Այս իմաստով, հարկ է ընդգծել, որ հնագույն

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

իրավական հուշարձաններում կան բազմաթիվ հիշատակություններ՝ թագավորական իշխանության ծագման աստվածային հիմքերի մասին<sup>2</sup>: «Ա նշանակում է, որ Աստված համարվում էր իշխանության միակ աղբյուրը և նա էր միապետին վերապահում երկրային կառավարումը: Նման «միջամտությունը», անշուշտ, հեղինակություն էր հաղորդում Աստծո տեղապահ համարվող միապետին և աստվածային սահմանության ուժով առավել հաստատում դարձնում նրա կառավարման ընթացքը: Ավելին, իին աշխարհում միապետերն անգամ իրենց կենդանության օրոք էին նույնացվում Աստծո հետ: Անզիացի նշանակոր գիտնական Զ.Զ. Ֆրեզերն իր «Ուսկե ճյուղը» իիմնարար աշխատության մեջ նշում է, որ սրբազն թագավորների հաստատությունը, ըստ երևոյթին, առաջացել է մոգական հատկություններով օժտված անհատների դասակարգից, որոնք քաղաքական և սոցիալական մեծ ազդեցություն էին գործում հասարակության անդամների կեցության և առաջընթացի վրա: Այդ խավի ամենաօժտված անդամներն առաջարկվում էին պետության ղեկավարի պաշտոնում և վերածվում սրբազն թագավորների:

Հասարակական և պետական կյանքի զարգացմանը զուգահեռ պետության աստվածային քննույթով պայմանավորված գործառույթներն աստիճանաբար առավել աշխարհիկ ուղղվածություն են ստանում: Վաղ շրջանի իրավունքի հուշարձաններում էլ կարելի է գտնել պետության աշխարհիկացման որոշ տարրեր: Այդպիսի դրսուրումներ առկա են, օրինակ՝ Բարելոնի արքա Համմուրաբիի օրենսգրքում: Իրավական մեծ արժեք ունեցող Համմուրաբիի օրենսգիրը, թեև զերծ չէ աստվածների մասին իշխատակություններից և երկրի վրա նրանց անունից հանդես գալու, նրանց փառարանելու և ծառայելու խորհրդից, այդուհանդերձ, իր ներքին կառուցվածքով չունի այնպիսի կրոնական բովանդակություն, ինչպես, օրինակ՝ Սովուսի օրենքները (Հնգամատյանը): Հատկանշական է, որ Համմուրաբիի կառավարման շրջանում դատական գործառույթները ամբողջովին անցան աշխարհիկ դատարանների իրավասության ներքո՝ այդպիսով որոշակի սահմանազատում կատարելով հոգևոր և աշխարհիկ ոլորտների միջև: Նույնը կարելի է ասել նաև իր տեսակով խիստ ինքնատիպ խեթական իրավական հուշարձանների վերաբերյալ: Խեթական օրենսգիրը, որը կարգավորում է պետականական և հանրային կյանքի տարրեր ոլորտներին վերաբերող հարցեր առավելապես հանդիսանում է աշխարհիկ նորմերի համախումը: Ընդհանրապես խեթական իրավական միտքը ոչ միայն չունի կրոնական վառ արտահայտություն,

այլև թույլատրելով այլ ցեղերի կողմից կատարվող կրոնական երկրագործությունները, ըստ էության, բովանդակում է կրոնական հանդուժողականության նորմեր:

Խոսելով վաղ շրջանում կրոնական այլակարծության՝ որպես հազվադեպ հանդիպող բացառիկ երևույթի մասին, չենք կարող շրջանցել Աքեմենյան տերության առաջնորդ Կյուրոս Սեծի բողած սեպագիր արձանագրությունը, որը հաճախ համարում են մարդու իրավունքների առաջին հոչակագիր՝ Կավե աղյուսի վրա գրված կանոնները, որոնք առավել հայտնի են որպես Կյուրոսի զլան, մեզ տալիս են այն ուշագրավ պատմահրավական տեղեկանքը, որ Բարելոնը գրավելուց և ստրուկներին ազատություն շնորհելուց հետո Կյուրոս Սեծը երկրում հաստատեց հավատքի ազատություն: Սա, ըստ երևոյթին, աշխարհիկ պետության անկյունաքարը հանդիսացող դավանանքի ազատության մասին առաջին իշխատակումն է և դրա կենսագործման մասին վկայող փաստը: Նկատենք միայն, որ պետության աշխարհիկացման վերոնշյալ տարրերը բավարար չեն խոսելու հոգևոր և աշխարհիկ իշխանությունների առանձնացման մասին: Դրա հիմքում ընկած էին որոշակի օրենկույթի պատճառներ:

Ինչպես արդեն նշվեց, հնագույն թագավորները, որոնց հասարակությունն օժտել էր աստվածային հատկություններով, իրենց մեջ ամփոփում էին, միաժամանակ, աշխարհիկ և հոգևոր իշխանությունը: Տիրակալի այդ երևոյթական գերբնականությունը ոչ միայն նրա անձի հեղինակության աղբյուր էր, այլև հսկայական պատասխանատվություն պետության անխարար ընթացքի և հասարակության բարության համար: Փաստուն, միապետին օժտելով վերանայած կարողություններով՝ մարդիկ նրանից ակնկալում էին նույնային ջանապրություն պետությանը սպառնացող աղետների և փորձությունների չեզորացման համար: Հետևաբար, արքան դիտարկվում էր ամեն տեսակ պատուհանների և հաջողությունների սկզբնապատճառ և դրանով պայմանավորված կամ շարունակում էր կառավարել, կամ՝ տարաբնույթ մեթոդներով գահընկեց արկում: Հասարակությունը, իր անվտանգության պահպանման շահից ելեւով, պահանջում էր, որ արքան անվերապահուեն կատարի կրոնական արարողակարգով նախատեսված բոլոր պարտավորությունները, որոնք լայն հաշվով ընկած էին աշխարհի պահպանման հիմքում: Ի վերջո աշխարհիկ և հոգևոր այս ծանրաբենող սահմանափակումների և ծիսական արգելքների բեռի տակ, ինչպես նշում է Ֆրեզերը, միապետները վեր էին ածվում հույյ էակների, ճգնավորների, որոնց անզոր ձեռքերից

կառավարման սանձերը հեշտությամբ անցնում էին այն մարդկանց կառչուն ձեռքը, որոնք բավարարվում էին իրական իշխանությամբ՝ առանց բարձր տիտղոսի, բազմութական հին գահատիմերին մնում են զուտ կրոնական պարտականությունները, այն դեպքում, եթե աշխարհիկ դեկապարությունն անցնում է ավելի երիտասարդ և եռանդուն մարդկանց ձեռքը :

Ինչպես պարզորոշ նկատում ենք՝ աշխարհիկ և հոգևոր իշխանությունների առանձնացման անհրաժեշտությունը պատմության օրյեկտիվ զարգացման հետևանք էր, և, առաջին հերթին, ենթադրում էր երկու ինքնուրույն ոլորտների գործառույթների և իրավասության շրջանակների զատորոշում, առանց որի անհնար կլիներ ապահովել արդյունավետ և անցնցում կառավարումը: Այսպիսով, աշխարհիկ և հոգևոր իշխանության տրոհմանը սկիզբ է դրվում երկու առանձին հաստատությունների տևական փոխառնչություններին՝ դրանցից բխող համադրություններին և հակազդեցություններին:

Այնուհետև, աշխարհիկ և հոգևոր իշխանությունների բաժանման մոտեցումներ կարելի նկատել Հին կտակարանում՝ Մովսեսի և նրա եղբայր Ահարոնի գործառույթների սահմանազատման համատերաստում, որն իր ավարտին հասավ Մովսեսի կողմից դատական իշխանության հաստատման հետ զուգահեռ: Մեր դիտարկմամբ, աշխարհիկ և հոգևոր իշխանությունների առանձնացման յուրօրինակ արտահայտություն կարող է համարվել աստվածաշնչյան հայտնի միտքը. «Աստծոնը տվեք Աստծուն, Կեսարինը՝ Կեսարին (Մատթ. 22:21):»:

Հիշյալ բաժանումը որոշ այլաբանություններով հանդիպում ենք նաև ինն հնդկական իրավունքի հուշարձաններում: Մանուի օրենքներում կարդրում ենք. «Արևն առանձնացնում էր ցերեկը և գիշերը՝ մարդկայինն ու աստվածայինը...»: Այս փոխարերական միտքն իր արտահայտությունն է զունում կրոնական և իրավական բնույթի այլ ստեղծագործություններում: Հինդուիստական մտքի մեկ այլ եզակի նմուշ համարվող Արտհաշաստրա կամ թարգմանաբար՝ գիտություն օգուտի մասին օրենքների ժողովածուի տեքստում ևս նշմարվում է աշխարհիկ և հոգևոր իշխանությունների գործառութային տարանջատումը: Այստեղ հոգևոր դասը (բրահմա) գերակայող դիրք ուներ աշխարհիկի նկատմամբ: Ինչպես երևում է տեքստի բովանդակությունից արքայի խորհրդական քուրմը պետք է օժտված լիներ բարոյական բարձր որակներով, տիրապետեր կառավարման գիտությանը, իսկ արքան պարտավոր էր հետևել նրա խորհրդին, ինչպես աշակերտ՝ ուսուցչին, որդին՝ հորը, ծառան-

տիրոջ<sup>10</sup>: Հոգևոր դասի առավելությունը, սակայն, կրում էր սուկ խորհրդանշական բնույթ, և, ամենին, չեր նվազեցնում միապետի իրավասությունները կամ ստվերում նրա ազդեցությունը պետական քաղաքականության մշակման և իրականացման գործում: Առաջնահերթ պայման էր դիտարկում պետական շահը՝ հանուն որի կարելի է զանց առնել կրոնական կարգադրագրերից բխող ցանկացած պարտավորություն: Անշուշտ, սա նորից վկայում է մեր կողմից արդեն հիշատակված այն իրողության մասին, որ արքայի համար հոգևոր և աշխարհիկ գործառույթների միաժամանակյա մեկտեղումն ավելորդ անհարմարություններ էր ստեղծում արդյունավետ կառավարման համար, որից ստիպված էր նա իրաժարվել: Ինչպես, իրավացիորեն, նկատում է պրոֆեսոր Օ.Ե. Լեյստը, այդ կերպ արքայի գործունեությունը ձերբազատվում էր նրա ամեն քայլափոխը՝ կաշկանդող կրոնական հանձնարարականներից»:

Պետք է հստակ արձանագրել, որ աշխարհիկ և հոգևոր իշխանությունների տարանջատումը, թեև կանխորշում է նրանց ոլորտների սահմանազատումը, այդուամենայնիվ աշխարհիկ պետության առաջացման լրիվ պայման չէր կարող դիտարկվել: Այն կարևոր նախադրյալ էր ստեղծում, որպեսզի պետությունը չմիջամտի հոգևոր դասի գործերին և վերջինս էլ չծանրաբեռնի աշխարհիկ իշխանությունը կրոնական խնդիրներով: Սա, թերևս, այն հարաբերական կայունությունն էր, որի շնորհիվ կարելի էր հասնել ինչպես կառավարման արդյունավետության բարձրացման, այնպես էլ հանրային հոգևոր պահանջմունքների բավարարման: Հարաբերությունների այս հաշվեկշռուն, ինչպես հետագայում ցույց տվեց աշխարհիկ և հոգևոր ինստիտուտների առնչությունների փորձը, պարբերաբար խախտվեց՝ արտահայտվելով մերը մեկի, մերը մյուսի գերակայությամբ: Այդ գաղափարական, երբեմն նաև ռազմական բախումների և հակասությունների կիզակետում հայտնվեցին ինչպես քաղաքացիական, այնպես էլ կրոնական ճամբարի տեսարաններ և մտածողներ, որոնք փորձեցին հիմնավորել սեփական հայեցակետների ճշմարտացիությունը և դրանով, փաստորեն, հարատացրեցին գիտությունը, մշակույթը, հոգևոր կյանքը, կառավարման արվեստը և այլն: Վերջապես այդ հաշկադեցությունների արդյունքում ընդգծվեց մարդու բնական իրավունքների կարևորության գիտակցումը՝ ծնունդ տալով այնպիսի քաղաքակրթական ձեռքբերումների, ինչպիսիք են՝ խոհի և դավանանի ազատությունը և լայն հաշվով աշխարհիկ պետության գաղափարը:

- <sup>1</sup> Վ.Ա. Թորոսյան, Հայաստանի Հանրապետության որպես աշխարհիկ պետության սահմանադրափական բնութագիրը. տեսական-իրավական վերլուծություն, ԺԲ.00.02, աստենախոսություն, Երևան, 2018, էջ 179:
- <sup>2</sup> Տե՛ս, օրինակ, շումերա-աքաղական, հայկական, խեթական իրավունքի աղբյուրները, Ուր Նամով օրենքները (մ.թ.ա. 21-րդ դար), Համմուրաբիի օրենքները (մ.թ.ա. 18-րդ դար), Սովետի օրենքները: Պ. Օ. Ավակյան, Պ.Պ. Ավակյան, Իстоки армянской правовой мысли: от Аратты, шумерской цивилизации до падения Ааратского (Урартского) царства.- Ер.: Ереванский ун-т “Манц”, 2008, С. 856.
- <sup>3</sup> Տե՛ս, Զ.Զ. Ֆրեզեր, Ուկե ճյուղը. Մոգության և կրոնի ուսումնասիրություն, խմբ. Ռ.Ա. Այվազյան- Եր.: Հայաստան, 1989, էջեր 129-130:
- <sup>4</sup> Տե՛ս, Պ.Օ. Ավակյան, Պ.Պ. Ավակյան, Իстоки армянской правовой мысли: от Аратты, шумерской цивилизации до падения Ааратского (Урартского) царства.- Ер.: Ереванский ун-т “Манц”, 2008. С. 314-351.
- <sup>5</sup> Պ.Օ. Ավակյան, Պ.Պ. Ավակյան, Իстоки армянской правовой мысли: от Аратты, шумерской цивилизации до падения Ааратского (Урартского) царства.- Ер.: Ереванский ун-т “Манц”, 2008. С. 473.
- <sup>6</sup> Տե՛ս, J.B. Pritchard, Ancient Near Eastern Texts Relating to the Old Testament, Princeton University Press, 3rd Revised edition, 1969, p. 315-316:
- <sup>7</sup> Տե՛ս, Զ.Զ. Ֆրեզեր, Ուկե ճյուղը. Մոգության և կրոնի ուսումնասիրություն, խմբ. Ռ.Ա. Այվազյան- Եր.: Հայաստան, 1989, էջեր 212-216:
- <sup>8</sup> Տե՛ս, Ռ.Ա. Պապյան, Արդի իրավունքի քրիստոնեական ակունքները, գիտ. խմբ.՝ Գ.Գ. Հարությունյան, Էջմիածին, 2002, էջեր 380-381: Տե՛ս նաև, Ռ.Գ. Պետրոսյան, Իրավունքի և օրենքի, դատարանի և արդարադատության աստվածաշնչյան հիմունքները,- Եր.: Ուկան Երևանցի, 2008, էջ 30:
- <sup>9</sup> Տե՛ս, Զаконы Ману, пер. С.Д. Эльманович, М.: Изд-во ЭКСМО-Пресс, 2002, стр. 27.
- <sup>10</sup> Տե՛ս, Արքանատրա или Наука политики Пер. ссанскрита; Изд. подгот. В.И. Кальянов; - М.Л.: Издательство Академии наук СССР, 1959, С. 25.
- <sup>11</sup> Տե՛ս, История политических и правовых учений. Учебник для вузов /Под редакцией д. ю. н., профессора О.Э. Лейста. М.: Издательство “Зерцало”, 2006, С. 17.

***Օգտագործված գրականության ցանկ***

1. Վ. Ա. Թորոսյան, Հայաստանի Հանրապետության որպես աշխարհիկ պետության սահմանադրափական բնութագիրը. տեսական-իրավական վերլուծություն, ԺԲ.00.02, աստենախոսություն, Երևան, 2018:
2. Զ.Զ. Ֆրեզեր, Ուկե ճյուղը. Մոգության և կրոնի ուսումնասիրություն, խմբ. Ռ.Ա. Այվազյան- Եր.: Հայաստան, 1989:
3. Ռ.Ա. Պապյան, Արդի իրավունքի քրիստոնեական ակունքները, գիտ. խմբ.՝ Գ.Գ. Հարությունյան, Էջմիածին, 2002:
4. Ռ.Գ. Պետրոսյան, Իրավունքի և օրենքի, դատարանի և արդարադատության աստվածաշնչյան հիմունքները,- Եր.: Ուկան Երևանցի, 2008:
5. Պ.Օ. Ավակյան, Պ.Պ. Ավակյան, Իстоки армянской правовой мысли: от Аратты, шумерской цивилизации до падения Ааратского (Урартского) царства.- Ер.: Ереванский ун-т, “Манц”, 2008.
6. История политических и правовых учений. Учебник для вузов / Под редакцией докт. юрид. наук, профессора О. Э. Лейста. М.: Издательство “Зерцало”, 2006.
7. Արքանատրա или Наука политики/ Пер. ссанскрита; Изд. подгот. В.И. Кальянов; - М.Л.: Издательство Академии наук СССР, 1959.
8. Законы Ману, пер. С. Д. Эльманович, М.: Изд-во ЭКСМО-Пресс, 2002.
9. J. B. Pritchard, Ancient Near Eastern Texts Relating to the Old Testament, Princeton University Press, 3rd Revised edition, 1969.

Ваге Торосян

Преподаватель юридического факультета Европейского университета,  
кандидат юридических наук

РЕЗЮМЕ

*Историко-правовые мотивы в разделении светской и духовной власти  
в контексте памятников древнего права*

В статье представлены историко-правовые предпосылки процесса решающей важности - разъединения светских и духовных властей в истоках идеи светского государства в свете памятников древнего права. Исследование раскрывает исторические и правовые предусловия, которые привели к разделению двух независимых сфер, способствуя тем самым формированию идеи феномена - светского государства, которое является красногольным камнем демократических государств в современную эпоху.

**Ключевые слова:** светское государство; разъединение светских и духовных властей; свобода религии; памятники права.

Vahe Torosyan

Lecturer of the Department of Law at European University,  
PhD in Law

SUMMARY

*Historical and legal motivations of secular and spiritual authorities  
in the context of monuments of ancient law*

The article presents the historical and legal prerequisites of the process of crucial importance - the separation of secular and spiritual authorities in the origins of the idea of a secular state in the light of the monuments of ancient law. The research reveals the historical and legal preconditions that led to the separation of two independent spheres, thereby contributing to the formation of the idea of the phenomenon - a secular state, which is the cornerstone of democratic states in modern age.

**Key words:** secular state; separation of secular and spiritual authorities; freedom of religion; monuments of law.

Բնագիրը ներկայացվել է 09.05.2019թ.

Ընդունվել է տպագրության 09.07.2019թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության իրավաբանական գիտությունների  
թեկնածու Դ.Գ.Մարգարյանը

**ԶՈՀՐԱԿ ԱՊՐԵՍՅԱՆ**

Եվրոպական համալսարանի իրավագիտության ամբիոնի  
ասպիրանտ

## **ԱՍՈՒՄՆՈՒ՝ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ՊԱՀԱՆՁՈՂ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՔԻ ԾԱԳՄԱՆ ՊԱՀԸ**

Սույն հոդվածում մեկնաբանվում է սեփականության իրավունքի ծագման պահն այն անձի համար, ում ամուսինը ամուսնության ընթացքում ձեռք է բերել գույք, որի նկատմամբ իրավունքները ենթակա են պետական գրանցման. Վորձ է արգում վեր հանել վերոնշյալ հարցի վերաբերյալ ՀՀ իրավական համակարգում առկա հակասությունները և լուծել դրանք:

*Հիմնարարեր-սեփականության իրավունք, ամուսնության ընթացքում ձեռք բերված գույք, իրավունք ծագման հիմք, իրավունքի ծագման պահ, իրավունքի պետական գրանցում:*

Զաղաքացիական հարաբերությունների մասնակիցների սեփականության իրավունքի պաշտպանության համար կարևոր նշանակություն ունի գույքի նկատմամբ վերջիններիս սեփականության իրավունքի ծագման պահը: Դա բացատրվում է նրանով, որ հենց այդ իրավունքի ծագման պահից է անձը ձեռք բերում սեփականության իրավունքի բովանդակությունը կազմող տիրապետման, օգտագործման և տնօրինման իրավագործությունները, և հենց այդ պահից է, որ պետությունը ճանաչում է սեփականատիրոջ իրավունքը գույքի նկատմամբ: Սեփականության իրավունքի պաշտպանությունը պետության կողմից, հաշվի առնելով դրա կարևորությունը, ունի սահմանադրական ամրագրում: Սահմանադրության 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը: Պետությունը պաշտպանում է սեփականության իրավունքը՝ յուրաքանչյուրին պարտավորեցնելով չխոչընդոտել սեփականատիրոջ իրավունքների իրականացմանը<sup>1</sup>:

ՀՀ օրենսդրությամբ սահմանվում են անձանց մոտ սեփականության իրավունքի ծագման հիմքերը: Ընդ որում՝ սեփականության իրավունքը անձի մոտ կարող է ծագել նաև՝ պայմանավորված վերջինիս իրավական կարգավիճակով: Այսպես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի համաձայն՝ ամուսնության ընթացքում ամուսինների ձեռք բերած գույքը նրանց համատեղ սեփականությունն է, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ նրանց միջև կնքված պայմանագրով: Այսինքն՝ գույք ձեռք բերող, ամուսնու կարգավիճակ ունեցող անձը, ևս կարող է հաղիսանալ ձեռք բերված գույքի սեփականատեր: Համատեղ սեփականության իրավունքի կիրառումը ամուսինների գույ-

քի նկատմամբ (...) պայմանավորված է հարաբերության մասնակիցների միջև անձնական վստահության կապերի հաշվառմամբ<sup>2</sup>:

Կախված սեփականության իրավունքի ծագման հիմքից՝ սեփականության իրավունքը կարող է ծագել տարբեր պահի: Օրինակ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքը (այսուհետ՝ Օրենսգրք) սահմանում է պայմանագրով ձեռք բերված գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ծագման պահը: Այսպես՝ Օրենսգրքի 176-րդ հոդվածի համաձայն՝ պայմանագրով գույքը ձեռք բերողի սեփականության իրավունքը ծագում է գույքը հանձնելու պահից, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Վերոնշյալ նորմից հետևում է, որ օրենսդրի սահմանում է պայմանագրով գույք ձեռք բերելու դեպքում, սեփականության իրավունքի ծագման պահի ընդհանուր կանոն, այն է՝ սեփականության իրավունքը գույքը ձեռք բերողի մոտ ծագում է այն հանձնելու պահից, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Օրենսդրը տարբերակում է նաև սեփականության իրավունքի ծագման պահը՝ կախված սեփականության իրավունքի օրենսդրից, այն է՝ գույքի նկատմամբ պետական գրանցման ենթակա իրավունքները ծագում են դրանց գրանցման պահից: Ամենահայտնի օրինակը վերաբերում է անշարժ գույքի նկատմամբ ծագող իրավունքներին: Այսպես՝ Օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը և այլ գույքային իրավունքները, այդ իրավունքների սահմանափակումները, դրանց ծագումը, փոխանցումն ու դադարումը ենթակա են պետական գրանցման: Անշարժ գույքի փաստացի փոխանցումը (օրինակ՝ տան բանալիների հանձնումը ձեռքբերողին) ինքն իրենով ազդեցություն չի ունենում սեփականության իրավունքի փոխանց-

ման վրա<sup>3</sup>:

Այս կերպ պետությունը, առանձին գույքերի մասով, սահմանում է պաշտպանության ավելի բարձր մակարդակ: Այս դեպքում գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ծագման պահից պետությունը ճանաչում է սեփականատիրոջ իրավունքը գույքի նկատմամբ և հենց այդ պահից էլ երրորդ անձինք պարտավոր են ձեռնպահ մնալ սեփականատիրոջ իրավունքների նկատմամբ որևէ անօրինական գործողությունից:

Պետական գրանցում պահանջող իրավունքների՝ դրանց պետական գրանցումից հետո ծագման կանոնը առաջին հայացքից ունի իմակերատիվ բնույթ: Բայց և այնպես, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքը (այսուհետ՝ Օրենք) սահմանում է ամուսնության ընթացքում ձեռք բերված գույքի նկատմամբ իրավունքի ծագման պահի վերաբերյալ այլ կանոն: Օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ գույքի նկատմամբ իրավունքները և սահմանափակումներն ունեն իրավաբանական ուժ՝ անկախ պետական գրանցումից՝ ամուսինների, երեխանների և խնամքի տակ գտնվող այլ անձանց իրավունքները, որոնք սահմանված են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, եթե նոյնիսկ այդ իրավունքներն առանձին չեն գրանցվել:

Եթե Օրենքը սահմանում է իրավունքի իրավաբանական ուժ ունենալը՝ անկախ պետական գրանցումից, ուրեմն՝ սեփականության իրավունքը ծագած է համարվում հենց նորմում նշված պայմանների վրա հասնելով: Այսինքն՝ համաձայն վերոնշյալ նորմի՝ ամուսնու պետական գրանցում պահաջող սեփականության իրավունքը ծագում է մյուս ամուսնու կողմից գույք ձեռք բերելու պահից: Նման մեկնաբանության արդյունքում՝ պրակտիկայում քիչ չեն հանդիպում դեպքերը, երբ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումից կամ գույքի գրավադրումից հետո հայտնվում է վաճառողի ամուսինը և վիճարկում առող�ությանը կամ գրավի պայմանագիրը՝ նշելով, որ գույքի նկատմամբ իրավունքները փոխանցվել են առանց մյուս սեփականատիրոջ՝ իր համաձայնության:

Նման հակասության լուծման համար օգտակար կարող է լինել դատական պրակտիկայի ոսումնասիրությունը: Նախ, ՀՀ սահմանադրական դատարանն իր ՍԴ-1448 որոշմամբ արձանագրել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման կարևորությունը. «Ելնելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական

գրանցման ինստիտուտի իրավական բովանդակությունից՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից բխող իրավունքների պետական գրանցման պարտականությունը սահմանելով և պետական գրանցման ենթակա իրավունքների ծագումն այդպիսի գրանցմանը պայմանավորելով ու գրանցման ժամկետ սահմանելով՝ օրենսդրությունը կազմուել է իրավաչափ նպատակ: (...) Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների ճանաչման, երաշխավորման և պաշտպանության առավել արդյունավետ իրացման առաջին նախապայմանը գույքի սեփականատեր հանդիսացող անձի պետության համար որոշակի լինելու է, ինչը, ի թիվս այլնի, ապահովվում է գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման ինստիտուտի միջոցով:»:

Կարևորելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման ինստիտուտը՝ ՀՀ սահմանադրական դատարանն իր մեկ այլ՝ ՍԴ-944 որոշմամբ, անդրադառնալով անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ծագման պահին, արձանագրել է. «ՀՀ քաղաքացիական օրենսգիրը որպես անշարժ գույքի նկատմամբ ցանկացած հիմքով սեփականության իրավունքի ծագման պահ է ճանաչում այդ իրավունքի պետական գրանցման պահը: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 176-րդ հոդվածը՝ պայմանագրի հիմնան վրա, որպես գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ծագման պահ է ճանաչում այդ իրավունքի պետական գրանցման պահը, եթե այդպիսի իրավունքն օրենքով ենթակա է գրանցման: (...) ՀՀ քաղաքացիական օրենսգիրը անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահը դիտում է որպես այդ իրավունքի ծագման նախապայման ոչ միայն սեփականության իրավունքի պարագայում, այլև անշարժ գույքի նկատմամբ ցանկացած այլ գույքային իրավունքի առնչությամբ:

(...) Վերոհիշյալը վկայում է, որ օրենսդրության մասնակիրեն անշարժ գույքի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված այս կամ այն հիմքից բխող իրավունքների պետական գրանցման փաստին հաղորդել է միանգամայն որոշակի նշանակություն՝ քաղաքացիական իրավաբերությունների մասնակիցների համար հստակ է, որ օրենսդրությունը անշարժ գույքի նկատմամբ գույքային իրավունքների ծագումը պայմանավորել է ոչ թե դրանց համար հիմք հանդիսացող հանգամանքների առկայությամբ, այլ այդ հանգամանքների առկայության պայմաններում համապատասխան գույքային իրավունքի պետական

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

գրանցման՝ անշարժ գույքի հետ կապված գործարքներից բխող իրավունքների ու պարտականությունների ճանաչման փաստով։»:

Վերոնշյալ որոշումից ուղղակիորեն հետևում է, որ անշարժ գույքի նկատմամբ իրավունքները (այդ թվում՝ սեփականության իրավունքը) կարող են ծագել քացառայիս այդ իրավունքների պետական գրանցման պահից, և հենց այդ պահից անձը կարող է հանդիսանալ անշարժ գույքի սեփականատեր։

Միևնույն որոշմամբ, Սահմանադրական դատարանը արձանագրում է մեկ այլ կարեռ հանգանակությունը և այս պահին անշարժ գույքի պահպանությունը՝ վերջիններիս թվում մատնանշելով նաև պայմանագրերն ու գործարքները։ Այդ նորմին համապատասխան՝ օրենսգրքի 289-րդ հոդվածը քաղաքացիական իրավունքների ու պարտականությունների սահմանամասն, դադարեցման և փոփոխման համար հիմք հանդիսացող «գործարք» եզրույթի քաղաքացիական իրավական բովանդակությունն է քացահայտում։ Մինչեւ Օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է գույքային իրավունքների ծագման համար հիմք հանդիսացող այս կամ այն հանգանակությունը՝ առկայության պայմաններում գույքի նկատմամբ պետական գրանցման ենթակա իրավունքների ծագման պահը։ Ակնհայտ է, որ քաղաքացիական իրավունքների, այդ թվում՝ սեփականության ու պարտականությունների «ծագման հիմքերը» և «ծագման պահը» միևնույն իրավական բովանդակությունը չունեն։ Վերոնշյալ որոշմամբ Սահմանադրական դատարանը հստակ սահմանագատում է մտցնում սեփականության իրավունքի ծագման հիմքերի և ծագման պահի միջև՝ միաժամանակ նշելով, որ սեփականության ծագման հիմքի առկայությունը դեռ չի խոսում սեփականության իրավունքի առկայության մասին։

Տվյալ դեպքում ամուսնության ընթացքում ամուսնու կողմից ձեռք բերված գույքը (որի նկատմամբ գրանցվել է վերջինիս սեփականության իրավունքը) մյուս ամուսնու համար հանդիսանում է սեփականության իրավունքի ծագման հիմք, և նա դեռ չի հանդիսանում տվյալ գույքի սեփականատեր՝ մինչև իր գույքի նկատմամբ սեփականության իրավունքը չի ենթարկվել պետական գրանցման։ Այսինքն՝ անձի մոտ սեփականության իրավունքի ծագման հիմքեր են հանդիսանում ամուսնու կողմից գույքի ձեռքբերման պայմանագրի կնքումը և դրանից ծագող իրավունքի պետական գրանցումը,

իսկ անմիջապես սեփականության իրավունքի ծագման պահ է հանդիսանում այդ գույքի նկատմամբ իր իրավունքի պետական գրանցումը։

Թեև ներկայիս օրենսդրությամբ ուղղակիորեն սահմանված չէ, թե ինչ դիրք է զբաղեցնում Սահմանադրական դատարանի որոշումը ՀՀ իրավական համակարգի իրավական ակտերի բուրգում<sup>4</sup>, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սահմանադրական դատարանի դիրքորոշումները հանդիսանում են Սահմանադրության մեկնաբանություններ, իսկ, եթե օրենսդրական որևէ նորմ հակասում է Սահմանադրության տրված մեկնաբանություններին, հետևապես հակասում է նաև հենց Սահմանադրությանը։

Ամփոփելով վերոգրյալ՝ գալիս ենք այն եզրակացության, որ՝

1. անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն ունի իրավաչափ նպատակ։ Այն կարեռ է հատկապես անձին պատկանող սեփականության՝ պետության կողմից պաշտպանվածության տեսանկյունից,

2. անձի սեփականության իրավունքը անշարժ գույքի նկատմամբ ծագում է միայն դրա նկատմամբ պետական գրանցման պահից,

3. պետական գրանցում պահանջող իրավունքների նկատմամբ ամուսնու սեփականության իրավունքը ծագում է միայն դրա նկատմամբ տվյալ ամուսնու՝ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման պահից։

<sup>1</sup> Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք (առաջին մաս), Տարիել Բարսեղյան, Երևանի համալսարանի հրատ., Երևան, 2009, էջ 293:

<sup>2</sup> Вещное право: Учебник: З.А. Ахметьянова: Статут, 2011, С. 79.

<sup>3</sup> Российское гражданское право: Учебник: Том I: Ответственный редактор Е.А. Суханов, Москва, 2011, ст. 529.

<sup>4</sup> 07.04.2018թ. ուժը կորցրած «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը և չպետք է հակասեն Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշումներին:

#### *Օգոազործված գրականության ցանկ*

1. ՀՀ Սահմանադրություն (ընդունված՝ 06.12.2015թ.):
2. ՀՀ քաղաքացիական օրենսգիրը (ընդունված՝ 05.05.1998թ.):
3. «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենք (ընդունված՝ 14.04.1999թ.):
4. «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք (ընդունված՝ 03.04.2012թ., ուժը կորցրած՝ 07.04.2018թ.):
5. Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1448 որոշումը:
6. Սահմանադրական դատարանի ՍԴՈ-944 որոշումը:
7. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք (առաջին մաս), Տարիել Բարսեղյան, Երևանի համալսարանի հրատ., Երևան, 2009:
8. Вещное право: Учебник: З.А. Ахметьянова: М: Статут, 2011.
9. Российской гражданское право: Учебник: Том I: Ответственный редактор Е.А. Суханов, Москва, 2011.

Зорак Априсян

Аспирант кафедры юриспруденции  
Европейского университета

#### РЕЗЮМЕ

##### *Момент возникновения права собственности у супруга(ги), требующего государственной регистрации*

В данной статье интерпретируется момент возникновения права собственности у человека, чей супруг(га) приобрел(а) имущество в браке, права на которое подлежат государственной регистрации: предпринята попытка выявить противоречия в правовой системе Республики Армения по вышеуказанному вопросу и разрешить их.

**Ключевые слова:** право собственности, имущество, приобретенное в браке, основание возникновения права, момент возникновения права, государственная регистрация права.

Zohrak Apresyan

PhD student of the chair of law  
of the European University

#### SUMMARY

##### *The moment of the origin of spouse's right of ownership, that requires a state registration*

In this article represents the moment of the origin of person's property right, whose spouse acquired a property, which requires a state registration, during marriage: an attempt is made to find out the contradictions in the legal system of the Republic of Armenia on the issue above and to solve them.

**Key words:** right of ownership, property acquired during marriage, the basis of the origin of the right, the moment of the origin of the right, state registration of the right.

Ընագիրը ներկայացվել է 10.06.2019թ.

Ընդունվել է տպագրության 09.07.2019թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա.Հ.Խաչատրյանը

**ԻԶԱԲԵԼԼԱ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ**

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի իրավունքի  
և քաղաքանության ինստիտուտի սահմանադրական և  
մունիցիպալ իրավունքի ամբիոնի հայցորդ

**ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱԶԱՏ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՄՐԱԳՐՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՅԵՐԸ<sup>1</sup>  
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՏՐԱՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԾՐՋԱՆԱԿՈՒՄ**

Հոդվածը նվիրված է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից կայացված նախադեպային որոշումներին, որոնք վերաբերել են պարտադիր կամ հարկադիր աշխատանքին և անդրադարձ է կատարվել աշխատանքի էությանը: Նախադեպերի միջոցով սահմանվել է պարտադիր և հարկադիր աշխատանքի էությունը, և նախանշվել են աշխատանքի ազատ ընտրության իրավունքի իմքում ընկած սկզբունքները: Դրանց վերաբերյալ հոդվածում կատարվել են եզրահանգումներ, որոնք եական նշանակություն ունեն ՀՀ Սահմանադրությամբ սահմանված աշխատանքի ազատ ընտրության իրավունքը մեկնարանելու և կիրառելու գործում:

**Հիմնարարեր-աշխատանքի ազատ ընտրության իրավունք, պարտադիր և հարկադիր աշխատանք, աշխատանքից ազատում:**

Մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում առանցքային հարցադրությունը է կազմակերպչական անհրաժեշտ մեխանիզմների առկայությունը, որոնց սահմանման ժամանակ միջազգային իրավական, այդ թվում՝ Մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) պրակտիկան դիտարկվում է որպես կարևոր նախապայման: Պատահական չէ, որ ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակությունից բխում է, որ մարդու իրավունքների և ազատությունների վերաբերյալ սահմանադրական նորմերի մեկնաբանման ժամանակ Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիմն վրա գործող մարմնների պրակտիկայի հաշվի առնելը դիտարկվում է արդեն որպես սահմանադրական պահանջ<sup>2</sup>:

ՀՀ Սահմանադրության 57-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորվում է յուրաքանչյուրի աշխատանքի ազատ ընտրության իրավունքը՝ որպես հիմնարար իրավունք, միաժամանակ, նույն հոդվածի 5-րդ մասով արգելվում է պարտադիր կամ հարկադիր աշխատանքը: Այս առումով հարկ է նշել, որ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիան (այսուհետ՝ Կոնվենցիա) նույնագեն նույնաբովանդակ իրավակարգավորումներ է սահմանել: Այսպես, Կոնվենցիայի 4-րդ հոդվածով արգելվում է ստրկությունը, պարտադիր և հարկադիր աշխատանքը<sup>3</sup>:

Թեև հիշյալ նորմները բառացիորեն չեն երաշխավորում աշխատանքի կամ աշխատանքի ազատ ընտրության իրավունք, սակայն պարտադիր և հարկադիր աշխատանքի արգելքը հանդիսանում է աշխատանքի իրավունքի, մասնավորապես, աշխատանքն ազատորեն ընտրելու իրավունքի բաղկացուցիչ մասերից մեկը: Միևնույն ժամանակ, ՄԻԵԴ-ը բազմիցս վերահստանել է, որ Կոնվենցիայով սահմանված պայմանների կիրառման սկզբունքներից մեկն այն է, որ դրանք չպետք է վակուումում կիրառվեն, և ըստ 1969թ. մայիսի 23-ին Վիեննայում ընդունված Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Կոնվենցիայով սահմանված մեկնաբանման դրույթների՝ պետք է հաշվի առնվի Կոնվենցիայի համատեքստը, առարկան և նպատակը: Ընդ որում, նշված դրույթները մեկնաբանելիս պետք է հաշվի առնվեն միջազգային իրավունքի այն կանոններն ու սկզբունքները, որոնք կիրառելի են Կոնվենցիան ստորագրած անդամ պետությունների միջև<sup>4</sup>:

Կոնվենցիայի կիրառման նման օրինակներից է Միդարքան ու Զիուտասն ընդում Լիտվայի գործով ՄԻԵԴ-ի որոշումը, որով դատարանը, վկայակոչելով Եվրոպական նորացված սոցիալական խարտիայի տեքստն ու Խարտիայի նկատմամբ վերահսկողություն իրականացնող Սոցիալական իրավունքների Կոմիտեի մեկնաբանությունները, կապված աշխատանքի ազատ ընտրության իրավունքի հետ, վերահստանել է, որ չկա հստակ բաժնում, որով սոցիալական և տնտեսական իրա-

վունքների ոլորտը կառանձնացվեր Կոնվենցիայով՝ սահմանված իրավունքների դաշտից :

Բացի այդ, պատահական չեն, որ ՄԻԵԴ-ը ոչ միայն բացահայտել է հարկադիր և պարտադիր աշխատանքի էությունը, այլ նաև Կոնվենցիայով՝ սահմանված այլ իրավունքների (օրինակ՝ անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքը, միավորվելու իրավունքը) խախտման վերաբերյալ գործեր քննելիս՝ նախանշել է աշխատանքի ազատ ընտրության իրավունքի նորմատիվ բովանդակությունը:

Կոնվենցիայի 4-րդ հոդվածի տրամաբանության շրջանակում ՄԻԵԴ-ը մեկնարանել է, որ հարկադիր աշխատանքը ներառում է նաև հարկադիր ծառայությունները: Սիաթամանակ, աշխատանքը հարկադիր համարվելու համար, այն պետք է իրականացվի անձի կամքին հակառակ և պատժի սպառնալիքով: Այդուհանդերձ, ոչ բոլոր աշխատանքներն են հանդիսանում հարկադիր կամ պարտադիր՝ նույնիսկ այն դեպքերում, եթե կատարվել են պատժի խուսափելու համար:

Հարկադիր կամ պարտադիր որակելու համար պետք է հաշվի առնել աշխատանքի տեսակը և քանակը: Այս դեպքերում ՄԻԵԴ-ը օգտագործում է «անհամաշափ բեռի» գաղափարը, որի մասին քննարկումը կատարվել է Վան դեր Մասելն ըննդեմ Քելզիայի գործում: Նշված գործով անհամաշափության համար ՄԻԵԴ-ը ներկայացրել է մի քանի շափորչի՝ արդյոք փաստաբան Վան դեր Մասելից պահանջվող ծառայությունը տարբերվելով է նրա սովորական փաստաբանական գործունեությունից, որքա՞ն ժամանակ է նա հատկացրել պահանջվող ծառայության համար, արդյոք փաստաբանը ինչ-որ ձևով հատուցում ստացել է ծառայության դիմաց՝<sup>6</sup>:

Այսպես, եթե «հարկադիր» եզրույթն ընկալվում է որպես ֆիզիկական կամ մտավոր հարկադրանք, ապա «պարտադիր» հասկացությունն անհրաժեշտորեն չի նշանակում ցանկացած տեսակի իրավական պարտադրանք կամ պարտավորություն: Օրինակ, կողմերի բանակցությունների արդյունքում ձեռք բերված պայմանագրային պարտավորություններից բխող աշխատանք կատարելը, տուժանքներից խուսափելու պատճառով, չի հանդիսանում Կոնվենցիայի 4-րդ հոդվածի առարկա: Հարկադիր համարվելու համար՝ աշխատանքը պետք է կատարվի «պատժի վախի ներքո» անձի կամքին հակառակ: Ընդ որում, պատիմը կարող է լինել ինչպես ֆիզիկական բռնության տեսքով, այնպես էլ հոգեբանական բնույթի օրինակ, վախեցնելը, այն դեպքում, եթե տուժողների աշխատանքա-

յին կարգավիճակը տվյալ երկրում համարվում է անօրինական, որ տուժողներին կհանձնեն իրավապահ մարմիններին կամ միզրացիոն ծառայություններին:

Ինչ վերաբերում է «աշխատանքին կամավոր համաձայնել» եզրույթին, ապա այն դիտարկվում է որպես յուրահատուկ չափորոշիչ՝ աշխատանքը պարտադիր կամ հարկադիր համարելու համար: ՄԻԵԴ-ի նման չափորոշիչների բովանդակությունից բխում է, որ անհրաժեշտ է հաշվի առնել այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են՝ ծառայությունները՝ կախված աշխատողի մասնագիտությունից, գործունեության մաս կազմելը, ծառայության դիմաց վճարվելը կամ որևէ կերպ հատուցվելը, աշխատանքի ծավալի համաշափությունը, աշխատելու պարտավորությունը, սոցիալական համերաշխության հայեցակարգի մաս կազմելը:

Աշխատանքի իրավունքի մասով, ՄԻԵԴ-ի որոշ եզրահանգումներ կարելի է վեր հանել Կոնվենցիայի 8-րդ հոդվածի ուսումնասիրության արդյունքներով պայմանավորված՝ հաշվի առնելով նույն ՄԻԵԴ-ի դատական նախադեպերը: Գրանցից բխում է, որ աշխատանքն անձնական կյանքի մի մասն է: Զնայած ՄԻԵԴ-ը չի պաշտպանում ապրուստ վաստակելու համար բոլորի աշխատանք գտնելու իրավունքը, սակայն այն ընդունում է, որ աշխատանքի միջոցով գոյություն պահպանելն անհրաժեշտ է անձի արժանապատվության համար: Այն ընդգծում է աշխատանքի կարևորությունը անձի ինքնարավարարման համար և պաշտպանում է աշխատողին գործառուի իշխանությունից:

Աշխատանքն անձնական կյանքի մասնիկ դարձնելու և ինքնարավարման աղբյուր հանդիսանալու վերաբերյալ ՄԻԵԴ-ը հստակ արտահայտվել է Նիեմեցն ընդունելով Գերմանիայի հայտնի գործով: ՄԻԵԴ-ն աշխատավայրը բնորոշել է որպես մի վայր, որտեղ մարդիկ զարգանում են՝ ստեղծելով սոցիալական փոխարարությունները: Այս գործով ՄԻԵԴ-ը բացատրական ձևով սահմանել է: «Անձնական կյանքի իրավունքը պետք է նաև, որոշ չափով ներառի այլ անձանց հետ հարաբերություններ ստեղծելու և զարգացնելու իրավունք»: Ակնհայտ որևէ պատճառ չկա «անձնական կյանք» հասկացությունից մասնագիտական կամ բիզնես բնույթի փոխարարերությունները տարանջատելու համար՝ ի վերջո անձանց մեծամասնությունն ունի արտաքին աշխարհի հետ փոխարարություններ ստեղծելու լայն, եթե ոչ ամենալայն հնարավորությունը»:<sup>10</sup>

Մեկ այլ՝ Սիլուաբրասն ու Զիուտասն ընդդեմ

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Լիտվայի գործով ՄԻԵԴ-ը նշում է, որ անձնական կյանքի իրավունքը. «...անհատի համար ապահովում է այնպիսի մթնոլորտ, որում նա կարող է ազատորեն զարգացնել և լրացնել իր անհատականությունը», սահմանելով, որ. «...աշխատանքի հասանելիության լայնածավալ արգելքը կարող է մեծ ազդեցություն ունենալ «արտաքին աշխարհի հետ փոխարարելություններ ստեղծելու ունակության» վրա:»<sup>11</sup> : Ավելին, նոյն գործում իրավական դիրքորոշումների ուսումնասիրությունից պարզվում է, որ ՄԻԵԴ-ը սահմանել է ապրուստ վաստակելու նպատակով աշխատանքի կարևորությունը: Տվյալ գործը վերաբերում է դիմումատունների աշխատանքից ազատմանը, ինչպես նաև հանրային և մասնավոր ոլորտում աշխատանքի արգելքներին՝ նախկին Ազգային անվտանգության ծառայության մարմնի՝ ԱԱԾ-ի անդամներ հանդիսանալու պատճառաբանությամբ: ՄԻԵԴ-ը հաստատել է, որ աշխատանքից ազատումը և աշխատանքի անցնելու արգելքը առաջացնում են «լուրջ դժվարություններ ... ապրուստի միջոց վաստակելու համար, անձնական կյանք վարելու ... ակնհայտ հետևանքներով» և սահմանել, որ խախտվել է նշված անձանց անձնական կյանքի անձեռնմխելությունը, ինչպես նաև ցուցաբերվել է խորական վերաբերմունք:<sup>12</sup>

Աշխատանքի իրավունքի արդյունավետ պաշտպանության և աշխատողի կողմից աշխատավայրում ինքնախրացման համար, աշխատողը պետք է պաշտպանվի աշխատավայրում գործատուի տիրապետությունից: Առհասարակ տիրապետման ուժը արտահայտվում է նրանում, որ անձն ունի մեկ ուրիշի ընտրությանը միջամտելու կամայական իրավասություն: Աշխատողին աշխատանքից ազատելու կամայականության հարցը նույնպես քննարկվել է ՄԻԵԴ-ի այլ որոշումներում:

Այսպես, տիրապետման արգելման սկզբունքը լավագույն կերպով արտահայտած դատական նախադեպերը ներառում են աշխատանքից դուրս կատարված գործողությունների հիմքով ազատումը: Անձնական նախապատվությունների և աշխատավայրից, և աշխատանքային ժամերից դուրս կատարվող գործողությունների հիմքով աշխատանքից ազատված անձինք դիմումներ են ներկայացրել՝ պնդելով Կոնվենցիայով սահմանված իրենց իրավունքների խախտումը: ՄԻԵԴ-ը որոշել է, որ Կոնվենցիայի իրավունքների խախտմամբ ազատումը պետք է ստուգվի արդարության պահպանման տեսանկյունից, այսինքն՝ անձի ազատման դեպքում պետք է առկա լինի գործատուի որոշման անկախ վերլուծություն: Օրինակ՝ ՄԻԵԴ-ը, քննելով միավորվելու ազատության խախտման վերա-

բերյալ դիմումատու Մեդֆերնի բողոքը, գտել է, որ քաղաքական կուսակցության անդամակցելը ինքնին պատճառ չի հանդիսանում անձին աշխատանքից ազատելու համար և պետությունը նման դեպքերում ունի այզդիսիվ պարտավորություն աշխատողին պաշտպանելու մասնավոր գործատուների գործողություններից կամ առնվազն տրամադրելու միջոց, որով հնարավոր կլինի օրյեկտիվորեն գնահատել ազատման պատճառի համաշափությունը<sup>14</sup>:

ՄԻԵԴ մեկ այլ գործով խնդրահարույց է համարվել Թագավորական ուազմային նավատորմի աշխատակիցներին ուազմական ծառայությունից ազատելը, զուտ այն պատճառով, որ բացահայտվել է նրանց միասեռական լինելը՝ առանց հաշվի առնելու վերջինների ծառայության որակը կամ վարքագիծը: Ազատման միջոցով կառավարման/տիրապետման խնդիրը հավանաբար առավել հստակորեն արտահայտվում է ԱյԲԻ-ն ընդդեմ Հունատանի գործում, որը վերաբերում է ՄԻԱՎ-դրական ախտորոշմանը անձի ազատմանը՝ նման կարգավիճակի պատճառով գործընկերների կողմից նրա հետ աշխատելուց հրաժարվելու հիմքով: Նշված գործով ընդգծվում է, որ «ախտակով» ազատումը ոչ միայն մեծ ազդեցություն ունի անձի անձնական կյանքի վրա, այլ նաև նոր աշխատանք գտնելը դարձնում է անորոշ: Այսինքն, առանձնահատուկ պատճառաբանությամբ, տվյալ դեպքում նաև ՄԻԱՎ-դրական ախտորոշման, աշխատանքից ազատելը կարող է բացահական ազդեցություն բռնել մարդու աշխատանքի իրավունքի իրացման վրա: ՄԻԵԴ-ը սույն գործով գտել է, որ խախտվել են անձնական կյանքի իրավունքը և խորականության արգելքի պահանջները:

Հստ էության, նշված գործերով պարզ է դասնում, որ ՄԻԵԴ-ը հատուկ ուշարտությամբ է մոտենում աշխատողին կառավարելու/տիրապետելու գործատուի լիազորությանը՝ ապրելակերպի ընտրության և աշխատողի անձնական կյանքի այլ հայեցակետերի հիմքով ազատման դեպքերին: Կառավարման/տիրապետման արգելքի սկզբունքը, որը հանդիսանում է նշված գործերի հիմքը, օժանդակում է անարդար ազատումը Կոնվենցիայի իրավունքների կիրառման հանգամանքներում և հիմք է հանդիսանում անարդար ազատումից պաշտպանության իրավունքի համար:

Այսպիսվ, թեև Կոնվենցիայով բառացիորեն չի երաշխավորվում աշխատանքի ազատ ընտրության իրավունքը, սակայն ՄԻԵԴ-ի դատական նախադեպերը սահմանված չափորոշչների պատշաճ կիրառմամբ կարող է որոշակիացնել դրա նորմատիվ բովանդակությունը հետևյալ տեսանկյուն-

ներով՝

ա) աշխատանքն ինքնափրացման աղբյուր է,  
բ) արգելվում է հարկադիր կամ պարտադիր աշխատանքը, ինչը նշանակում է, որ աշխատանքը պետք է ընտրվի ազատորեն, այն է՝ անձը պետք է կամովին համաձայնվի աշխատել՝ առանց վախի կամ պատժի սպառնալիքի, աշխատանքում պետք է բացառվի անձի շահագործումը, աշխատանքի դիմաց պետք է առկա լինի վարձատրություն կամ որևէ այլ տեսակի հասունում,

գ) աշխատողը չպետք է գտնվի գործատողի տիրապետման ներքո՝ աշխատանքից չազատվի գործատողի կամայականությամբ՝ առանց հիմնավոր պատճառի,

դ) աշխատանքից ազատվելու դեպքում աշխատողը պետք է ունենա պաշտպանության իրավունք, քանի որ պետությունն այս մասով ունի պողիտիկ պարտավորություններ:

<sup>1</sup> 2015թ. դեկտեմբերի 6-ին ընդունված փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդված:

<sup>2</sup> 1950թ. նոյեմբերի 4-ին ընդունված Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիա, 4-րդ հոդված:

<sup>3</sup> Digest of the case law of the European Committee of Social Rights, Council of Europe, 1 September, 2008, p.20.

<sup>4</sup> Rantsev vs. Cyprus and Russia, App No 25965/04, Judgement of 7 January 2010, § 273.

<sup>5</sup> Sidabras and Dziautas v. Lithuania, App Nos 55480/00 and 59330/00, Judgment of 27 July 2004, §47.

<sup>6</sup> Van der Mussele vs. Belgium, App No 8919/80, Judgment of 23 November 1983, §39.

<sup>7</sup> Guide on Article 4 of the European Convention on Human Rights, Prohibition of Slavery and forced labour, 2<sup>nd</sup> edition, 2014 § 20, 21.

<sup>8</sup> C.N. and V. v. France, App. No 67724/09, Judgement of 11 October 2012, § 77.

<sup>9</sup> Guide on Article 4 of the European Convention on Human Rights, Prohibition of Slavery and forced labour, 2<sup>nd</sup> edition, 2014 § 29.

<sup>10</sup> Niemietz v. Germany, App No 13710/88, Judgment of 16 December 1992, §29.

<sup>11</sup> Sidabras and Dziautas v. Lithuania, App Nos 55480/00 and 59330/00, Judgment of 27 July 2004, § 49.

<sup>12</sup> Sidabras and Dziautas v. Lithuania, App Nos 55480/00 and 59330/00, Judgment of 27 July 2004, § 48.

<sup>13</sup> P. Pettit, Republicanism: A Theory of Freedom and Government, Oxford, 1999, p. 52.

<sup>14</sup> Redfearn vs. the UK , App. 47335/06, Judgment of 06 November 2012, § 43.

<sup>15</sup> Smith and Grady v. the UK App. 33985/96 and 33986/96, Judgment of 27 September 1999, § 34.

<sup>16</sup> IB v Greece, App No 552/10, Judgment of 3 October 2013, § 72.

#### *Օգուազործված գրականության ցանկ*

1. 2015թ. դեկտեմբերի 6-ին ընդունված փոփոխություններով ՀՀ Սահմանադրություն:
2. 1950թ. նոյեմբերի 4-ին ընդունված Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիա:
3. Digest of the case law of the European Committee of Social Rights, Council of Europe, 1 September, 2008.
4. Rantsev vs. Cyprus and Russia, App No 25965/04, Judgement of 7 January 2010.
5. Sidabras and Dziautas v. Lithuania, App Nos 55480/00 and 59330/00, Judgment of 27 July 2004.
6. Van der Mussele vs. Belgium, App No 8919/80, Judgment of 23 November 1983.
7. Guide on Article 4 of the European Convention on Human Rights, Prohibition of Slavery and forced labour, 2<sup>nd</sup> edition, 2014.
8. C.N. and V. v. France, App. No 67724/09, Judgement of 11 October 2012.
9. Niemietz v. Germany, App No 13710/88, Judgment of 16 December 1992.
10. P. Pettit, Republicanism: A Theory of Freedom and Government, Oxford, 1999.
11. Redfearn vs. the UK , App. 47335/06, Judgment of 06 November 2012.
12. Smith and Grady v. the UK App. 33985/96 and 33986/96, Judgment of 27 September 1999.
13. IB v Greece, App No 552/10, Judgment of 3 October 2013.

Изабелла Искандарян

Соискатель кафедры конституционного и муниципального права института права и политики Российско-Армянского (Славянского) университета

**РЕЗЮМЕ*****Основные вопросы конституционного закрепления права на свободный выбор труда  
в рамках практики Европейского суда по правам человека***

Статья посвящена прецедентным решениям Европейского суда по правам человека, которые относятся к принудительному или обязательному труду, а также решения, по которым суд затронул вопросы права на труд. Прецедентными решениями суд определил суть принудительного и обязательного труда, наметил принципы права на свободный выбор труда. Сделанные в статье выводы имеют существенное значение для конструирования и применения права на свободный выбор труда, провозглашенного Конституцией РА.

**Ключевые слова:** право на свободный выбор труда, принудительный и обязательный труд, увольнение с работы.

Izabella Iskandaryan

Researcher of the department of constitutional and municipal right of Russian-Armenian (Slavonic) University

**SUMMARY*****Fundamental issues of the constitutional adoption of the right to free choice of employment  
in the framework of the practice of the European Court of Human Rights***

The article is dedicated to the cases of the European Court of Human Rights which related to forced or compulsory labour or the right to work. The court defined in its decisions the essence of the forced and compulsory labour and envisaged the principles underlying the right to free choice of employment. The conclusions made in these articles shall be useful for the construction of the right to free choice of employment set by the Constitution of the Republic of Armenia.

**Key words:** right to free choice of employment, forced and compulsory work, dismissal.

Բնագիրը ներկայացվել է 12.06.2019թ.

Ընդունվել է տպագրության 09.07.2019թ.

Հողմածը երաշխավորել է տպագրության իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա.Հ.Խաչատրյանը

## ՎԻՐԱԲ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ՝  
դատական դեպարտամենտի դատավորների ընդհանուր  
ժողովի և դատարանների աշխատակազմերի գործունեության  
ապահովման վարչության դատավորների ընդհանուր ժողովի և  
հանձնաժողովների գործունեության ապահովման բաժնի  
առաջատար մասնագետ,  
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության  
ամբիոնի ասպիրանտ

### **ՄԵՂՋԻ ՍԿԶԲՈՒՆՔԻ ԵՎ ՊԱՏԺԻ ՀԱՍՏՉԱՓՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՎԱԿԱՆ ԱՄՐԱԳՐՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼ ՆԵՐԸ**

Հոդվածում փորձ է արվել բացահայտել մեղքի և պատժի համաշխափության սկզբունքների սահմանադրական ամրագրման հնարավոր պատճառները, հիմքերը և նախադրյալները, բացահայտել, առհասարակ, իրավունքի սկզբունքի էությունը և ՀՀ Սահմանադրությամբ քննարկվող երկու սկզբունքների մեջ հորվածում ամրագրման անհրաժեշտությունը, նաև ուսումնասիրվել է երկու սկզբունքների փոխադարձ կապը:

**Հիմնարարել – իրավական սկզբունք, մեղքի սկզբունք, պատժի համաշխափության սկզբունք, սահմանադրական սկզբունք, սահմանադրական երաշխիք, սահմանադրական հողված:**

Մեղքի և պատժի համաշխափության սկզբունքների սահմանադրական ամրագրման նախադրյալները բացահայտելու համար անհրաժեշտ է նախևառաջ բացահայտել, թե ինչ է սկզբունքը, ինչ են իրենցից ենթադրում մեղքի սկզբունքը և պատժի համաշխափության սկզբունքն առհասարակ:

Ընդհանուր առմամբ, իրավունքը կառուցվում և գործում է որոշակի սկզբունքների հիման վրա, որոնք արտացոլում են դրա էությունը և սոցիալական նշանակությունը: Դրանցում դրսևրվում են իրավունքի գլխավոր հատկանիշներն ու առանձնահատկությունները՝ հասարակական հարաբերություններում դրան հաղորդելով ազատության և արդարության միջոցների պետական կարգավորիչի հատկությունները:

Իրավունքի սկզբունքները հանդիսանում են հիմնարար գաղափարներ, որոնց միջոցով արտահայտվում են հասարակական կյանքի օրյեկտիվ օրինաշխափությունները: Դրանք համարվում են իրավական համակարգի հենայունները՝ ուղղակի կամ անուղղակի ամրագրվում են տարբեր իրավական նորմերում, ուղղակի կամ անուղղակի կարգավորում են տարատեսակ հասարակական հարաբերություններ, օժտված են համապարտադրության հատկանիշով:

Իրավունքի սկզբունքները հիմնարար կառավարման ելակետային դրույթներն են, որոնք իրավաբանորեն ամրապնդում են հասարակական կյանքի օրյեկտիվ օրինաշխափությունները: Դրանք իրենց մեջ կուտա-

կում են իրավունքի առավել բնորոշ հատկանիշները, սահմանում են դրա իրավական բնույթը: Իրավունքի սկզբունքներն ընկած են իրավական պետության, պետական իշխանության բոլոր մարմինների գործունեության հիմքում: Դեկավարվելով դրանցով՝ պետությունն ապահովում է իր քաղաքացիների սոցիալ-տնտեսական, քաղաքական և անձնական իրավունքներն ու ազատությունները, երաշխավորում է նրանց կողմից իրավական պարտականությունների կատարումը: Ի վերջո, սկզբունքներից յուրաքանչյուրն ունի սոցիալական ծագում, նրանց աղբյուրը հանդիսանում է հասարակությունը, իր քաղաքակրթության որոշակի փուլում:

Իրավունքի սկզբունքները համեմատաբար ինքնուրույն իրավական երևույթներ են, և դրանք կարող են ցուցաբերել սեփական ազդեցությունը իրավունքի զարգացման վրա: Իրավական երևույթների օրինաշափ փոխհարաբերությունների բազմազանությունը չի սպառվում նրանց հիմնարար կառուցվածքային կապով, հատկապես, եթե խոսքը գնում է կառուցվածքային առումով նման բարդ երևույթների մասին, ինչպիսիք են՝ իրավունքի ճյուղը, իրավունքի համակարգը, իրավական երևույթների արտաքին կապերն այլ սոցիալական երևույթների հետ:

Իրավական սկզբունքներն օժտված են անհրաժեշտությամբ: Համապատասխան պայմանների առկայության դեպքում դրանք անխուսափելիորեն հայտնվում են հասարակական և իրավական հարաբերությունների համակարգում՝ անկախ

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

դրանց գիտակցումից և գործող օրենսդրությամբ  
ամրագրումից: Այնուամենայնիվ, օրենսդրության  
մեջ իրավունքի գործող նորմերի համակարգում,  
իրավական սկզբունքները ձեռք են բերում համա-  
պարտադիր նշանակություն այնքանով, որքանով  
դրանք ամրագրված են օրենսդրի մարմնի կողմից:<sup>3</sup>

Վերոգրյալից կարելի է եզրակացնել, որ իրավունքի սկզբունքները համապարտադիր նշանակություն են ծեղոք բերում միայն այն ժամանակ, եթե ամրագրվում են օրենսդիր մարմնի կողմից, այսինքն՝ օրենքներում: Սակայն, չէ՞ որ բազմաթիվ սկզբունքներ ամրագրվում են Սահմանադրությամբ՝ հետևաբար, կոչվում են սահմանադրական սկզբունքներ: Մերի և պատժի հանաչափության սկզբունքներն, ամրագրված լինելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, ունեն առավել քան համապարտադիր նշանակություն՝ հենց Հայաստանի Հանրապետության ամենաբարձր իրավաբանական ուժ ունեցող փաստաթիրություն ամրագրված լինելու պատճառով: Իսկ, ինչպես գիտենք, մեր երկրում Սահմանադրությունն ընդունվում է միայն հանրաքվեի միջոցով, ոչ թե օրենսդիր մարմնի կողմից: Հետևաբար, իրավունքի սկզբունքների համապարտադիրությունը կապել միայն օրենսդիր մարմնի կողմից դրանց ամրագրման հետ, այնքան էլ ճիշտ չէ:

ՀՀ Սահմանադրության 71-րդ հոդվածի համաձայն՝

1. Հանցանք կատարած անձի պատժի հիմքը նրա մեղքն է:
  2. Օրենքով սահմանված պատիժը, ինչպես նաև նշանակված պատժատեսակը և պատժաչփը պետք է համաչափ լինեն կատարված արարությունից:

Սակայն, պետք է նշել, որ տարբեր երկրներում քննարկվող սկզբունքներն իրենց ամրագրումն են ստուգել տարբեր փաստաթուղթերում:

Սեղրի սկզբունքն ամրագրված է տարբեր երկրների նորմատիվ իրավական ակտերում, ինչպես օրենսդրական, այնպես էլ սահմանադրական մակարդակով։ Մասնավորապես, Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգրքի 5-րդ հոդվածի համաձայն՝ անձը ենթակա է քրեական պատասխանատվության միայն այն հանրորեն վտանգավոր գործողությունների (անգործության) համար, ինչպես նաև վրա հասնող հանրորեն վտանգավոր հետևանքների համար, որի համար հաստատված է նրա մեղրը։

Օբյեկտիվ մեղսագրումը, այսինքն՝ առանց մեղքի պատճառված վճարի համար քրեական պատասխանատվությունը, անթույլատրելի է:

Սեղը (նպատակի և շարժափթի հետ միասին) կազմում է համագործության սուբյեկտիվ կողմո՞ն: Այն անձի ներքին հոգեբանական վեռաբեր-

մունքն է, նրա կողմից կատարված հանրորեն վտանգավոր արարքի (գործողության կամ անզորդության) և դրա հետևանքների նկատմամբ՝ դիտավորության և անզգուշության տեսքով (այս հասկացությունների համար տես՝ 24-27-րդ հոդվածների մեկնաբանությունները): Մեղքը հանցագործության սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշն է: Առանց մեղքի չկա և չի կարող լինել հանցակազմ, հետևաբար՝ քրեական պատասխանատվություն: Այս սուբյեկտիվ կողմի հիմնական հատկանիշն է, որը սահմանազատում է հանցավոր գործունեությունը ոչ հանցագործից:

Ուսասատանի Դաշնության քրեական իրավունքն ունի սուբյեկտիվ մեղսագրման դիրքորոշում: Վերջինը նշանակում է, որ օրենքը քրեորեն պատժելի կանաչի միայն այն հանրորեն վտանգավոր արարքը, որը կատարվել է մեղավորությամբ: Օրյեկտիվ մեղսագրումը, այսինքն, առանց մեղքի՝ վնասի պատճառման համար քրեական պատասխանատվությունը չի բույլատրվում: Կատարված որևէ արարք, որքան էլ ծանր հետևանքներ ունենա, առանց մեղքի չի կարող դիտարկվել որպես հանցագործություն: Մեղսագրված արարքը և դրա հանրորեն վտանգավորությունը, որը անձը չի կարող կանխատեսել, կդիտվի գորկ արդարությունից և որևէ նախազգուշական նշանակությունից, ուստի՝ մերժմում է արդարադատության կողմից: Այսպես՝ Ուսասատանի Դաշնության Բարձրագույն դատարանի նախագահությունը շեղյալ է հայտարարել S.-ի գործով դատավճիռը և դադարեցրել է գործի փարույքը՝ հանցագործության կատարման մեջ անձի մեղքի վերաբերյալ ապացույցների բացակայության պատճառով (ԵՎ ԲԸ ԲԸՖԸ, 1990, N 8, ստ. 6-8): Մեղքի սկզբունքը ենթադրում է միայն անձնական պատասխանատվություն: Քրեական պատասխանատվության կարող է ենթարկվել միայն այն անձը, ով անձամբ է կատարել հանցագործություն՝ որպես կատարող կամ հանդիսացել է դրա կազմակերպիչը, դրիխը կամ օժանդակողը: Տվյալ դեպքում այլ անձանց վրա (օրինակ՝ ծնողներ, խնամակալներ) քրեական պատասխանատվություն տարածվել չի կարող:

ՀՀ-ում մեղքի սկզբունքն իր ամրագրումն է ստացել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2015 թվականի խմբագրությամբ: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 71-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված է հետևյալը. «Հանցանք կատարած անձի պատժի հիմքը նրա մեղքն է»: Պատահական չէ մեղքի սկզբունքի սահմանադրական ամրագրումը, քանի որ այն հաճախ ստանձնում է կենտրոնական դեր որոշ հասարակական հարաբերությունների կարգավորման և դրանց համար օրենսդրական բազայի ստեղծման ռնաբարում:

Սեղի սկզբունքը Սահմանադրությամբ համադրված է պատմի համաշափության սկզբունքի հետ:

Արհասարակ, համաշափության գաղափարը, որպես արդարության անբաժանելի մաս, առաջ է քաշվել դեռևս հնագույն ժամանակներից՝ հոյեների և հոռմեացիների կողմից: Արիստոտելը կարծում էր, որ արդարը համաշափն է, իսկ անարդարը՝ այն, ինչ խախտում է համաշափությունը: Ա. Յու. Միգաչը նշում է, որ ժամանակակից իրավունքում արդարության կատեգորիայի նշանակությունն ինաստով նույն «aequitas» հոռմեական հասկացությանը, որը նշանակում է հավասարաչափություն, համաշափություն, հավասարություն: Հետևաբար՝ համաշափությունը կարելի է հասկանալ որպես հավասարակշռություն, սոցիալական փոխազդեցության գործընթացում տրամադրվածի և ստացվածի միջև համապատասխանություն:

Մարդու իրավունքների և իմմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 74-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ չի կարող նշանակվել ավելի ծանր պատիժ, քան այն, որը կիրառելի է եղել քրեական հանցագործության կատարման պահին: Այսինքն, սրանով փորձ է արվում պահպանել պատմի առնվազն այն համաշափությունը, որը եղել է մեղավորությամբ կատարված հանցավոր արարքի պահին: Փաստորեն՝ Կոնվենցիայի սույն կարգավորումից բխում է, որ այնուամենայնիվ, պատմի համաշափությունը կարող է փոփոխվել, սակայն միայն այն պարագայում, որը չի վատքարացնի անձի վիճակը: Այսպիսով, կարող ենք պնդել, որ պատմի համաշափության սկզբունքը որոշակի առումով բխում է արդարության սկզբունքից:

Սեր կարծիքով, պատմի համաշափության սկզբունքի և արդարության սկզբունքի կապը պայմանավորված է նրանով, որ պատմի տեսակը և պատժաշափը համապատասխանեցվում են պատմի նպատակների հետ: Սա նշանակում է, որ դրանք պետք է լինեն բավարար պատմի նպատակներին հասնելու համար, սակայն չպետք է լինեն ավելի: Իհարկե, այդ սահմանը շատ նուրբ է, սակայն պատմի հենց այդ անհրաժեշտ տեսակի և չափի ոչ ավել, ոչ պակաս լինելը, իրենից ենթադրում է արդարություն, իսկ այդ սահմանը ճիշտ գտնելու ճանապարհին, առաջ է գալիս մեղքի սկզբունքը. նախ՝ դրա առկայությունն առհասարակ, մեղքի էության և ծավալի բացահայտումը, դրա համար օրենսդիր մարմնի կողմից սահմանված պատիժը և մի շարք այլ հանգամանքներ:

Պատահական չէ, որ Ո-Դ քրեական օրենսգրքի «Արդարության սկզբունքը» վերտառությամբ 6-րդ հոդվածի 1-ին մասով շարադրված է հետևյալը.

«Հանցագործություն կատարած անձի նկատ-

մամբ կիրառելի պատիժը և քրեական բնույթի այլ միջոցները պետք է արդար լինեն, այսինքն, համապատասխան հանցագործության հանրային վտանգավորության բնույթին և աստիճանին, դրա կատարման հանգամանքներին և մեղավորի ինքնությանը»:

Սեղի և պատմի համաշափության սկզբունքների սահմանադրական ամրագրման հարցի ավելի համալիր քննարկման համար անհրաժեշտ է առաջ քաշել հետևյալ հարցադրությունները.

1. Ինչո՞ւ են որոշ իրավունքի սկզբունքներ ամրագրված սահմանադրական մակարդակում, իսկ որոշ սկզբունքներ ել՝ օրենսդրական:

2. Ինչո՞վ է պայմանավորված այդ տարրերակումը:

3. Ինչո՞վ է պայմանավորված քննարկվող երկու սկզբունքները մեկ հոդվածով ամրագրելու անհրաժեշտությունը:

Ինչ վերաբերում է առաջին երկու հարցադրություններին, պետք է նշել, որ դրանք հանդիսանում են միմյանց շարունակություններ:

Իրավունքի սկզբունքները կարող են հատուկ ամրագրվել ընդհանուր իրավական նորմերի (նորմերի-սկզբունքների) մեջ (սահմանադրություններում, օրենքների նախագծերում, օրենսգրքերում) կամ հանդիսանալ հենց իրավունքի հիմքը՝ ներքանցելով իրավունքի նորմերի ներքին բովանդակության մեջ: Իրավունքի սկզբունքները օբյեկտիվ փորեն հարմարեցված են հասարակական հարաբերությունների բնույթով, որոնց վրա հիմնվում է որոշակի իրավական համակարգ: Սա նշանակում է, որ հասարակական հարաբերությունների յուրաքանչյուր համակարգ չի կարգավորվում կամայականորեն, այլ՝ օբյեկտիվ պահանջներին համապատասխան, որոնք արտացոլվում են իրավական համակարգում և կազմում են դրա եռթյունը: Այս կամ այն իրավական համակարգի սկզբունքների բնույթը չի կարող սահմանվել մեկուսացած սոցիալ-տնտեսական պայմաններից, պետական իշխանության կառուցվածքից և բովանդակությունից, հասարակության ամբողջ քաղաքական համակարգի կառուցման և գործունեության սկզբունքներից:

Վերոգրյալից կարելի է հետևություն անել, որ իրավունքի սկզբունքների ամրագրման եղանակները կախված են կոնկրետ պետության իրավական համակարգից, առկա օբյեկտիվ պահանջներից: Իսկ այդ օբյեկտիվ պահանջների վրա կարող են ազդել մի շարք գործուներ, ինչպիսիք են վերը թվարկված սոցիալ-տնտեսական պայմանները, պետական կառուցվածքն, առհասարակ, և, իհարկե, հասարակական, իրավական, քաղաքական համընդհանուր այլ սկզբունքները: Դրանցից յուրաքանչյուրը յուրովի է ազդում իրավունքի տարրեր սկզբունքների ձևավորման և դրանց ամրագրման

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Եղանակների վրա: Հետևաբար, տարբեր երկուների իրավական համակարգերում տարբեր իրավունքի սկզբունքներ դառնում են ինչպես սահմանադրական, այնպես էլ՝ օրենսդրական ամրագրման առարկա: Դա նախևառաջ պայմանափորված է տվյալ պետության իրավական համակարգում իրավունքի կոնկրետ սկզբունքների դերից և նշանակությունից:

Ինչ վերաբերում է երրորդ հարցադրմանը, ապա վերջինիս պատասխանը գտնելու համար նախևառաջ անհրաժեշտ է բացահայտել քննարկվող երկու սկզբունքների կապը:

Որոշ առումով պատիժը կարելի է համարել մեղքի հետևանքը, որը վրա է հասնում օրենքով սահմանված ընթացակարգերով՝ արդարադատություն իրականացնող մարմնի որոշմամբ: Իսկ պատժատեսակը և պատժաշափը կարելի է համարել պատժին որոշակիություն հաղորդող կոմպոնենտներ, որոնք, սակայն, մեծ դեր են ունենում պատժի համաշափության ապահովման, այսինքն՝ մեղքի և պատժի ներդաշնակությանը հասնելու գործում: Այս ամենը, իհարկե, հանդիսանում է օրենսդրական կարգավորման առարկա, սակայն պետք է արձանագրել, որ քննարկվող սկզբունքները մեկ սահմանադրական հոդվածում ամրագրելն ինքնանպատակ չէ և ունի իր իրավական նշանակությունը:

Մասնավորապես, կարծում ենք, որ երկու սկզբունքների՝ սահմանադրական մակարդակով մեկ հորվածում ամրագրելու նպատակը, վերջիններիս կապը և միմյանցով մշտապես փոխկապակցված լինելու հանգամանքը հմարավորինս շեշտադրելն է, քանի որ օրենսդրական մակարդակում քննարկվող սկզբունքներին վերաբերող նյութական և դատավարական նորմեր սահմանելիս դրանց հիմքում ընկած երկու սկզբունքները կարող են հեռանալ միմյանցից, իսկ մայր օրենքի մեկ հոդվածում դրանց ամրագրումն այդ երևույթը բացառող սահմանադրական երաշխիք է:

Այս ամենը կարելի է դիտարկել նաև, որպես ՀՀ իրավական համակարգի էվոլյուցիայի որոշակի մաս:

Կարծում ենք, որ իրավունք անընդեզ է ապրում էվոլյուցիա, ինչն էլ իր հերթին բերում է, բարյայն իմաստով, օրենքի զարգացմանը: Այսինքն, սա ևս, որոշակի իմաստով, կարելի է համարել նաև իրավունքի և օրենքի զարգացման դրսնորում:

Գերմանիայի դաշնային դատարանի դատավոր, դոկտոր Ալբրիտսոր Հենինգ Ռադբերգ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախագծի 71-րդ հոդվածի վերաբերյալ, ի թիվս այլնի, նշել է, որ ուղարկիորեն ներառելով քրեակարգական մեղքի սկզբունքը՝ Նախագիծը Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունքի

և քրեական իրավունքի համար նոր ճանապարհով է գնում: Մեղքի սկզբունքն առաջարկված իմաստով ունի սահմանադրափական ու քրեափակական բաղադրիչներ: Ռադբերգ նշել է նաև, որ մեղքի պատիժը սահմանափակող գործառույթի մակարդակում մեղքի սկզբունքը բացառում է կոնկրետ պատժի ակտի համար այնպիսի պատժի սահմանում, որի չափը գերազանցում է մեղափորությամբ հանցանքի կատարման միջոցով անձի կողմից կոնկրետ արարքի համար իրականացված մեղքի ծավալը: Հանցանք կատարած անձի նկատմամբ սահմանված պատիժը պետք է արդար հարաբերակցության մեջ լինի ինչպես կատարված արարքի ծանրության, այնպես էլ հանցանք կատարած անձի մեղափորության աստիճանի հետ: Կոնկրետ արարքի անարդարության և մեղքի բաղադրիչների համեմատ անհամաչափ պատժի սահմանումը բացառվում է սահմանադրութեն:

Վերոգրյալից երեսում է, որ Ռադբերգ և քննարկվող սկզբունքները կապում է արդարության սկզբունքի հետ, սակայն այդ հարցին մոտենում է մեղքի և պատժի հարաբերակցության տեսանկյունից:

Երբեմն տեղի են ունենում իրադարձություններ, որոնք բեկումնային են դառնում կոնկրետ իրավական համակարգի զարգացման համար: Այդպիսի իրադարձությունների շարքին են դափում ՀՀ-ում 2015 թվականին տեղի ունեցած սահմանադրական փոփոխությունները, որի արդյունքում, ի թիվս այլնի, ՀՀ Սահմանադրությամբ ամրագրվեցին մեղքի սկզբունքը և պատժի համաշափության սկզբունքը: Առհասարակ, յուրաքանչյուր իրավունքի նորմ և բխում է իրավունքի որոշակի սկզբունքներից, հետրևաբար, իրավունքի սկզբունքները ունենում են որոշիչ դեր իրավական ամրող համակարգի ձևավորման համար: Որքան բարձր է այն ընդունված փաստաթղթի իրավաբանական ուժը, որում ամրագրված է իրավունքի սկզբունքը, այնքան բարձր է դրա դերն ու կարևորությունը տվյալ պետության իրավական համակարգի ձևավորման գործում:

Կարելի է հանգել այն հետևողաբար, որ առկա է եղել անհրաժեշտություն մեղքի և պատժի համաշափության սկզբունքները բարձրացնել սահմանադրական մակարդակի: Այդ անհրաժեշտությունը պայմանավորված է եղել ՀՀ իրավական համակարգում դրանց տեղի, դերի և նշանակության կարևորությամբ և բխել է ՀՀ իրավական համակարգի զարգացման տրամաբանությունից:

- <sup>1</sup> В. Н. Хропаник Теория государства и права, Москва, 2011, С. 206.
- <sup>2</sup> Т. Н. Радько Теория государства и права, учеб. 2-е изд. Москва, 2010, С. 312.
- <sup>3</sup> В. М. Сырых Логические основания общей теории права, том 1, Юридический Дом “Юстицинформ”, Москва, 2000, С. 63-64
- <sup>4</sup> Комментарий к уголовному кодексу РФ, Юрайт, Москва 2006, С. 31.
- <sup>5</sup> В. Н. Хропаник Теория государства и права, Москва, 2011, С. 207.

*Օգակործված գրականության ցանկ*

1. В. Н. Хропаник Теория государства и права, 5-ое издание, издат. “Омега-Л”, Москва, 2011-323 с.
2. Т. Н. Радько Теория государства и права, учеб. 2-е издание, издат. “Проспект”, Москва 2010-752 с.
3. В. М. Сырых Логические основания общей теории права, том 1, Юридический Дом “Юстицинформ”, Москва, 2000-528 с.
4. Комментарий к уголовному кодексу РФ, издат Юрайт, Москва, 2006-944 с.

Վիրաբ Վարդանյան

Ведущий специалист отдела обеспечения деятельности генеральной ассамблеи судей и комиссий управления обеспечения деятельности генеральной ассамблеи судей и аппаратов судов Судебного департамента- Аппарат Высшего судебного совета.  
Аспирант кафедры юриспруденции академии государственного управления РА

**РЕЗЮМЕ**

*Предпосылки конституционно-правового закрепления принципа права и принципа пропорциональности наказания*

В статье предпринята попытка выявить возможные причины основания и предпосылки конституционно-правового закрепления принципов вины и пропорциональности наказания, раскрыть в общем сущность принципа права и необходимость закрепления обсуждаемых двух принципов в одной конституционной статье. Также была изучена связь между двумя принципами.

**Ключевые слова:** правовой принцип, принцип вины, принцип пропорциональности наказания, конституционный принцип, конституционная гарантия, конституционная статья.

Virab Vardanyan

Office to the Supreme Judicial Council: Leading Specialist of the Department for Ensuring the Activities of the General Assembly of Judges and the Commission for the Department of Ensuring the Activities of the General Assembly of Judges and Courts' Judicial Department, PhD student of the chair of law of the Public Administration Academy of the Republic of Armenia

**SUMMARY**

*The preconditions of constitutional-legal entrenchment of the principle of guilt and the principle of proportionality of punishment*

The aim of this article is to reveal all the possible reasons of the constitutional-legal entrenchment of the principles of guilt and proportionality of punishment, as well as their grounds and preconditions, the essence of the principle of law and the necessity to fix the two principles discussed in the same article of the Constitution. The relation/connection of the two principles has also been studied.

**Key words – legal principle, principle of guilt, principle of proportionality of punishment, constitutional principle, constitutional guarantee, constitutional article.**

Բնագիրը ներկայացվել է 14.06.2019թ.

Ընդունվել է տպագրության 09.07.2019թ.

Հողմածը երաշխավորել է տպագրության իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա.Հ.Խաչատրյանը

## ԱՐՍԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Եվրոպական համալսարանի իրավագիտության  
ամբիոնի ասպիրանտ

### ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՔԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՎԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀՐՑԵՐԸ

Սույն հոդվածը վերաբերում է վնասի հատուցման սահմանադրական իրավունքին: Փորձ է արվել բա-  
ցահայտել հիմնական իրավունքի սահմանադրավական բովանդակությունը և ներկայացնել դրա  
կազմած լինելը հանրային իշխանության և անձանց միջև ծագող իրավական կապի եռթյանը՝ հաշվի առ-  
նելով այս հարցի վերաբերյալ Մարդու իրավունքների եվլուպական դատարանի ձևափրած պրակտիկան:

*Հիմնարարեր-պաշտպանության միջոց ունենալու իրավունք, վնասի հասուցման իրավունք, նյուրա-  
կան և ոչ նյուրական վնաս, առաջնային և երկրորդային իրավունք:*

Առավել ընդհանրական կերպով վնասը բնո-  
րոշվում է, որպես պետության, կազմակերպություն-  
ների և քաղաքացիների օրենքով պահպանվող  
իրավունքերի, շահերի ուսնահարման կամ խախտ-  
ման հետևանք<sup>1</sup>: Տարբերակվում են վնասի երկու  
տեսակ՝ նյուրական և ոչ նյուրական: Նյուրական  
վնասը այն վնասն է, որը կարելի է հաշվել, իսկ ոչ  
նյուրականը՝ հաշվելն անհնար է<sup>2</sup>: Ոչ նյուրական  
վնասը իր մեջ ներառում է ցավի և տաճանքի արդ-  
յունքում կրած վնասը (բարոյական վնաս), ինչպես  
նաև գեղեցկության կամ տեսքի կորուստը (loss of  
amenity):

ՀՀ Սահմանադրության 62-րդ հոդվածի 1-ին  
մասում<sup>4</sup> ամրագրված վնասի հատուցման հիմնա-  
կան իրավունքը սահմանող նորմն անձանց համար  
երաշխավորում է հանրային իշխանության սուր-  
յեկտների կողմից նրանց իրավունքների և օրինա-  
կան շահերի խախտման հետևանքով կրած զր-  
կանքների, կորուստների, այսինքն՝ պատճառված  
վնասի դիմաց փոխհատուցման ստացումը: Օրեն-  
քով հատուկ սահմանված դեպքերում անձինք կա-  
րող են ակնկալել, նաև ստանալ, փոխհատուցում՝  
իրավաչափ վարչարարության հետևանքով ծագած  
վնասի դիմաց:

ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ և  
3-րդ մասերի վերլուծությունից հետևում է, որ հան-  
րային իշխանության հիմնական պարտականու-  
թյունն է՝ իր գործունեության ընթացքում չխախտել  
անձանց իրավունքները, ազատությունները և օրի-  
նական շահերը: Բոլոր այն դեպքերում, երբ, այնու-  
ամենայիշ, նման խախտումներ արձանագրվում  
են, հանրային իշխանությունը պարտավոր է ապա-  
հովել իր կողմից խախտված իրավունքների պաշտ-  
պանությունը՝ վերականգնել դրանք ի թիվս այլոց  
խախտմամբ պատճառված վնասի դիմաց փոխհա-

տուցում տրամադրելու միջոցով:

Ինչպես հայտնի է սուրյեկտիվ իրավունքի  
պաշտպանության եղանակների տակ հասկացվում  
են օրենքով ամրագրված հարկադրական բնույթի  
նյուրահարավական միջոցները, որոնց կիրառմամբ  
իրականացվում է խախտված իրավունքների վե-  
րականգնումը և ներգործությունը իրավախախտի  
վրա:

Իրավունքի խախտման փաստն արձանագր-  
ված լինելու դեպքում դրանց պաշտպանությունը,  
դեպքերի գերակշիռ մասում, կարող է իրականաց-  
վել՝ մինչև խախտումը եղած իրավիճակը վերակա-  
նագնելու, իրավունքը խախտող գործողություննե-  
րը դադարեցնելու և/կամ խախտմանը համարժեք  
հատուցում տրամադրելու միջոցով:

Մինչև իրավունքի խախտումը եղած դրույթու-  
նը վերականգնելը կամ իրավունքը խախտող գոր-  
ծողությունները դադարեցնելը, հաճախ բավարար  
չեն սուրյեկտիվ իրավունքը վերականգնված դիտե-  
լու համար, քանի որ պաշտպանության այս միջոց-  
ները հաշվի չեն առնում, խախտմամբ պայմանա-  
վորված, դրանից բխող բացասական հետևանքնե-  
րը, որոնք իրավունքի վերականգնումն արդյունա-  
վետ կերպով ապահովելու համար նույնական պետք  
է վերացվեն: Հնարավոր չեն հետադարձ կարգով  
հասնել մի իրավիճակի, երբ սուրյեկտիվ իրավուն-  
քի արդեն իսկ տեղի ունեցած խախտման հետևան-  
քով կրած զրկանքները և կորուստները (վնասը)  
վրա հասած չինեն, այդ իսկ պատճառով խախտ-  
ման փոխհատուցում արդյունավետորեն կարող է  
պաշտպանվել խախտման դիմաց արժանապա-  
տիվ փոխհատուցում տրամադրելու միջոցով:

Վնասի հատուցումն ավանդաբար դիտվել է  
որպես սուրյեկտիվ իրավունքի պաշտպանության  
միջոց, որի կիրառումը պետք է ապահովի սուրյեկ-

տիվ իրավունքի խախտման պատճառով կրած զրկանքների և կորուստների դիմաց համարժեք հատուցում ստանալը, ինչն էլ, մյուս միջոցների հետ համակցության մեջ՝ կհամարվի բավարար պայման խախտված իրավունքը վերականգնված դիտարկելու համար:

Այս համատեքստում հարկ է առանձնացնել ՀՀ Սահմանադրության 62-րդ հոդվածի 2-րդ մասը, որի համաձայն՝ եթե հանցանք կատարելու համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված անձն արդարացվել է այն հիմքով, որ նոր կամ նոր երևան եկած որևէ հանգամանք ապացուցում է նրա դատապարտման ոչ իրավաչափի լինելը, ապա այդ անձն ունի օրենքին համապատասխան հատուցում ստանալու իրավունք, եթե չի ապացուցվում, որ այդ հանգամանքի ժամանակին բացահայտումը լիովին կամ մասամբ կախված էր տվյալ անձից:

Արդեն, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 162.1-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, եթե դատապարտյալն արդարացվել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիային կից թիվ 7 Արձանագրության 3-րդ հոդվածով նախատեսված պայմաններում, ապա նա իրավունք ունի դատական կարգով պահանջելու իրեն պատճառված ոչ նյութական վճարի հատուցում (սույն օրենսգրքի իմաստով՝ հատուցում անարդարացի դատապարտման համար):

Այսպիսով, սահմանադրի կողմից առաջարրած կարգավորումից հետևում է, որ ապօրինի դատապարտված անձի նկատմամբ կայացված մեղադրական դատավճռոր նոր կամ նոր երևան եկած հանգամանքների ուժով վերացնելը, նոր դատական ակտ կայացնելը և դրանով իսկ մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը վերականգնելը բավարար չէ անձի խախտված սույնեկտիվ իրավունքն ամբողջությամբ վերականգնված համարելու համար սահմանադրությամբ պահանջում է նաև սույնեկտիվ իրավունքը խախտելու հետևանքով ծագած ոչ նյութական վճարի (սույն դեպքում ապօրինի դատապարտման պատճառով կրած զրկանքների) դիմաց անձին տրամադրել օրենքին համապատասխան հատուցում: Անհրաժեշտ է նաև հստակ արձանագրել, որ այս հատուցումը պետք է տրամադրվի հենց ապօրինի դատապարտման դիմաց՝ անկախ դրա հետևանքով անձի կրած գույքային վճարի (որը նույնապես մտնում է ՀՀ Սահմանադրության 62-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորումների շրջանակի մեջ) հատուցումից:

Վճարի հատուցման իրավունքը, հանդիսան-

լով խախտված իրավունքի պաշտպանության միջոց, գտնվում է համակարգային կապի մեջ ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածով նախատեսված՝ իրավունքների և ազատությունների արդյունավետ պաշտպանության միջոցները ունենալու իրավունքի հետ, հետևաբար՝ խնդրո առարկա սույնեկտիվ իրավունքի բովանդակության բացահայտման տեսանկյունից կարևոր նշանակություն ունի հիշատակված կապի վերհանումը:

Անհրաժեշտ է բացահայտել՝ արդյոք վճարի հատուցման սահմանադրական իրավունքը ծագում է միայն այն դեպքում, եթե մեկ այլ հիմնական իրավունքի խախտման և դրա հետևանքով զրկանքներ կրելու փաստն ապացուցված է, թե սահմանադրախրավական տեսանկյունից վճարի հատուցման իրավունքը հանդիսանում է սույնեկտիվ իրավունքի պաշտպանության արդյունավետ միջոց ունենալու հնարավորության մասնավոր դրսորում՝ ուրեմն այն ինքնուրույն հիմնական իրավունք է: Այդ իսկ պատճառով՝ գտնում ենք, որ վճարի հատուցման սահմանադրական իրավունքի էության վերհանման տեսանկյունից կարևոր նշանակություն ունի նաև այդ սույնեկտիվ իրավունքի հիմնարար կամ երկրորդային (ածանցյալ) բնույթ ունենալու հարցի պարզաբանումը:

Ածանցյալ պետք է համարվեն այն իրավունքները, որոնց խախտումը հնարավոր է միայն այն դեպքում, եթե վաղօրոք տեղի է ունեցել մեկ այլ իրավունքի խախտում, այսինքն՝ առաջինի խախտումը արձանագրելու նախապայմաններից է երկրորդի խախտման փաստի արձանագրումը:

Հիմնարար բնույթ ունեցող սույնեկտիվ իրավունքը կարող է դիտարկվել խախտված՝ անկախ մեկ այլ սույնեկտիվ իրավունքի խախտումն արդեն իսկ արձանագրված լինելու հանգամանքից:

Առաջին մոտեցումից բխում է, որ վճարի հատուցման սահմանադրական իրավունքը կարող է ծագել միայն այն պայմանով, որ խախտված լինի հիմնական մեկ այլ իրավունք: Ակզրում պետք է արձանագրվի որևէ իրավունքի խախտում, ինչից հետո էլ պետք է ծագի այդպիսի խախտման պատճառով առաջացած զրկանքների և կորուստների դիմաց փոխհատուցում պահանջելու հնարավորությունը: Զկա որևէ հիմնական իրավունքի խախտում, ուրեմն վճարի հատուցման իրավունք անձը չունի, հետևաբար՝ այդ իրավունքն որևէ կերպ խախտվել չի կարող:

Այս մոտեցումն իր արտահայտությունն է գտել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.2-րդ հոդվածում, որը կարգավորում է հանրային իշխանության գործունեության ընթացքում անձանց պատճառ-

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ված ոչ նյութական վնասի հատուցման հետ կապված հարցերը:

Հիշատակված հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ ոչ նյութական վնասի հատուցման պահանջը դատարան կարող է ներկայացվել ինչպես սույն օրենսգրքի 162.1-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավունքի խախտումը հաստատելու պահանջի հետ, խախտման մասին անձին հայտնի դառնալու պահից, այնպես էլ այդ իրավունքի խախտումը հաստատող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո կամ ոչ արդարացնող հիմքով քրեական գործի հարուցումը մերժելու, կամ քրեական հետապնդում չիրականացնելու, կամ քրեական գործով վարույթը կարծելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին քննիչի կամ դատախազի կայացրած՝ չվերացված կամ չբողոքարկված որոշման մասին այդ անձին հայտնի դառնալու պահից մեկ տարվա ընթացքում:

Սուաջին հայացքից կարող է թվալ, որ ներկայացված նորմը սահմանում է ոչ նյութական վնասի հատուցման պահանջով դատարան հայց ներկայացնելու ժամկետները, սակայն այն պատասխանում է շատ ավելի լայն շրջանակի հարցերի:

Նշենք, որ դատարան դիմելու ժամկետը օրենսդրի կողմից նախատեսված այն ժամանակահատվածն է, որի սահմաններում խախտված նյութական իրավունքը կարող է վերականգնվել հարկադրաբար: Հետևաբար՝ նշված ժամկետի հոսքի համար մեկնարկային կետ է հանդիսանում հենց նյութական իրավունքի խախտման պահը, որից հետո էլ միայն իրավագործ անձը ծեռում իր իրավունքների հարկադրի պաշտպանություն ստանալու (առարկայական) իրավունքը: Հայցային վաղենության ժամկետը չի կարող ծագել ավելի շուտ, քան տեղի կունենա այն իրավունքի խախտումը, որի հարկադրի պաշտպանության համար անձը դիմել է դատարան: Չկա խախտում, ուրեմն չկա իրավախստի նկատմամբ նյութական պահանջի իրավունք, հետևաբար՝ չկա այդ պահանջի հարկադրի իրականացման խնդրանքով դատարանին դիմելու ժամկետի հայցային վաղենության, հոսքի մեկնարկ:

Ոչ նյութական վնասի հատուցման պահանջով հայցային վաղենության ժամկետի մեկնակետը հիմնական իրավունքի խախտման փաստը ճանաչող իրավական ակտի ուժի մեջ մտնելու հետ կապելով՝ օրենսդիրը ամրագրել է այն մոտեցումը, որ վնասի հատուցման իրավունքը ունի երկրորդային բնույթը և դրա ծագումը պայմանավորված է միայն այլ հիմնական իրավունքի խախտման փաստով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.2-րդ

հոդվածի 9-րդ մասի կարգավորումներից հետևում է, որ անձը պատճառված վնասի դիմաց դատական կարգով հատուցում պահանջելու իրավունք է ձեռք բերում հետևյալ նախապայմանների առկայության պարագայում:

ա) Իր իրավունքի խախտումը հաստատող անհատական իրավական ակտը մտել է օրինական ուժի մեջ և դարձել անբողոքարկելի: Նշված ակտով էլ հենց հաստատվում է հանրային իշխանության մարմինների կամ պաշտոնատար անձանց գործողությունների, կամ դրսուրած անգործության ոչ իրավաչափ լինելը և անձի իրավունքի խախտման փաստը:

բ) Վնասի հատուցման պահանջի հետ միասին ներկայացվում է նաև իրավունքի խախտումը ճանաչելու պահանջ՝ ենթադրյալ խախտման մասին իմանալու պահից մեկ տարվա ընթացքում:

Եթե անձը դատարան դիմի միայն ոչ նյութական վնասի հատուցման պահանջով, դատարանը պարտավոր կլինի կայացնել հայցադիմումը վարույթը ընդունել մերժելու մասին որոշում՝ գործը դատարանում քննության ենթակա չլինելու հիմքով. այս հանգանակը պայմանավորված է նրանվ, որ վնասի հատուցման պահանջ ներկայացնելու նախապայմաններից է միաժամանակ նաև իրավունքի խախտման փաստը ճանաչելու մասին պահանջի ներկայացումը:

Սա նշանակում է, որ վնասի հատուցման պահանջի շրջանակներում դատարանը չի կարող քննարկել պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների գործողությունների իրավաչափության հարցը՝ չնայած նրան, որ իրավախստման առկայությունն ավանդաբար հանդիսանում է վնասի հատուցման պահանջի բավարձում չորս նախապայմաններից մեկը:

Այսպիսով՝ վնասի հատուցման իրավունքը կարող է գործել (իրացվել) միայն այն դեպքում, եթե նախօրոք առկա է հանրային իշխանության սուբյեկտի կողմից անձի իրավունքը խախտելու հաստատող օրինական ուժ ունեցող իրավական ակտ կամ այդ հարցը որպես հիմնական պահանջ պետք է լուծվի դրանից ածանցյալ՝ վնասի հատուցման պահանջի հետ գուգահետ:

Երկրորդ մոտեցման համաձայն՝ վնասի հատուցման իրավունքն ինքնին ունի հիմնարար բնույթը, և այդ իրավունքին հակադրվում է պետության պողիտիվ պարտականությունը, ներպետական մակարդակում խախտված իրավունքների վերականգնման համար անձանց տրամադրել արդյունավետ միջոցներ, ինչը, տվյալ դեպքում, արտահայտվում է պատճառված վնասի դիմաց հատու-

ցում ստանալու հնարավորության երաշխավորմամբ<sup>8</sup>: Վճարի հատուցման իրավունքը վերաբերում է պետության կողմից ներպետական մակարդակում այնպիսի իրավական գործընթացի երաշխավորմանը, որի արդյունքում անձը հնարավորություն կունենա արդյունավետորեն վերականգնել իր խախտված իրավունքները: Այլ կերպ՝ վճարի հատուցման իրավունքն անձի սեփական իրավունքները և ազատությունները արդյունավետ կերպով վերականգնելու հնարավորության մասնավոր դրսերում է: Այս իրավունքի սահմանադրախրավական բովանդակությունը հանգում է կրած գրկանքների և կորուստների հետևանքով պատճառված վճարի դիմաց փոխհատուցման տրամադրման եղանակով/տեսքով իրավունքի պաշտպանության անհրաժեշտ և արդյունավետ միջոցից օգտվելու հնատիտուցիոնալ պայմանների ապահովմանը, ինչը կարող է անձի համար օբյեկտիվորեն երաշխավորել ցանկալի արդյունքի ստացում: Այս դեպքում հիմնական այլ իրավունքների խախտման հանգամանքը չի համարվում վճարի հատուցման սահմանադրական իրավունքի խախտման փաստը արձանագրելու համար պարտադիր նախապայման:

Այս մոտեցման համաձայն՝ վճարի հատուցման իրավունքն ավելի լայն բովանադակություն ունի, քան զուտ խախտմամբ պատճառված վճարի դիմաց արտապայմանագրային պարտավորական իրավահարաբերություններից բխող փոխհատուցման պահանջի իրավունք ունենալը. այս իրավունքն հակառակում է պետության պողիտիվ պարտականությունը թե՛ օրենսդրորեն, թե՛ փաստացի անձի համար ապահովում է այնպիսի գործիքակազմ, որի կիրառմամբ վերջինս կարողանա, իրեն պատճառված վճարի փոխհատուցման եղանակով, հասնել իր խախտված իրավունքների վերականգնմանը: Եթե անգամ օրենսդրորեն ամրագրվի վճարի հատուցման իրավունքը, սակայն, անձը, ոչ իր մեղքով, փաստացի չկարողանա հանրային իշխանության մարմիններից ստանալ իրեն պատճառված վճարի հատուցումը, ապա այս դեպքում նույնպես վճարի հատուցման սահմանադրական իրավունքը կհամարվի խախտված:

Այսիսով, քննարկման առարկա հանդիսացող իրավունքի վերաբերյալ առկա են երկու հետևյալ մոտեցումները.

Առաջին, եթե վճարի հատուցման իրավունքը դիտարկենք փոխհատուցում պահանջելու՝ պետական հարկադրանքով պաշտպանված հնարավորություն, ապա այն ծագում է միայն մեկ այլ հիմնական իրավունքի խախտման դեպքում: Իր եթ-

քին, վճարի հատուցման իրավունքի խախտում արձանագրելու համար անհրաժեշտ կլինի ի սկզբանե հիմնավորել մեկ այլ սուբյեկտիվ իրավունքի խախտման փաստ, որի ուժով էլ անձը պետք է ձեռք բերի նյութախրավական պահանջի հնարավորություն:

Երկրորդ, եթե վճարի հատուցման իրավունքը դիտարկենք, որպես սահմանադրի կողմից պետության վրա դրված պողիտիվ պարտականություն անձանց համար ներպետական մակարդակում ապահովելով պաշտպանության այնպիսի միջոցից օգտվելու հնարավորություն, որը փաստացի կարող է երաշխավորել սուբյեկտիվ իրավունքների և օրինական շահերի խախտման պատճառով կրած գրկանքների և կորուստների դիմաց փոխհատուցում ստանալը, ապա այլ դեպքում վճարի հատուցման իրավունքը կհանդիսանա ինքնուրույն հիմնական իրավունք, որի խախտումը կարող է արձանագրվել առանց մեկ այլ հիմնական իրավունքի կամ օրինական շահի խախտման փաստը հաստատելու անհրաժեշտության:

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորումը, ըստ որի՝ հիմնական իրավունքները մեկնաբանելիս հաշվի են առնվում նաև ՀՀ վակերացրած միջազգագային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան՝ վճարի հատուցման իրավունքի սահմանադրախրավական բովանադակության բացահայտման առունով կարենու նշանակություն ունի նաև հարցի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) պրակտիկայի վերհանումը:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 13-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, ում, սույն Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ, եթե խախտումը կատարել են ի պաշտոն գործող անձինք:

Կոնվենցիայի նախապատրաստական աշխատանքներից (travaux préparatoires) հետևում է, որ 13-րդ հոդվածի ներդրման նապատակն անձանց այնպիսի իրավական միջոցների (գործիքների) տրամադրումն է եղել, որոնց կիրարկմամբ հնարավոր է վերականգնել վերջիններիս խախտված իրավունքները ներպետական մակարդակում՝ մինչև Կոնվենցիայով սահմանված վերահսկող ատյաններին դիմելը<sup>9</sup>:

Այսպիսով՝ հիշատակված կոնվենցիոն նորմը

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

պահանջում է ներպետական մակարդակում անձանց համար ստեղծել իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ, որոնք ի գորու են երաշխավորել կոնվենցիոն իրավունքների կյանքի կոչումը և դրանց վերականգնումը:

Պայմանավորվող կողմերի՝ Կոնվենցիայի 13-րդ հոդվածով սահմանված պողիտիվ պարտականության շրջանակները կախված են ենթադրաբար խախտված իրավունքի բնույթից, իսկ հիշատակված հոդվածից բխող պարտավարությունները ապահովելու եղանակների ընտրության հարցում պետություններն օժտված են որոշակի ինքնավարությամբ: Ամեն դեպքում, քննարկվող նորմով պահանջվող պաշտպանության միջոցները պետք է լինեն արդյունավետ ինչպես օրենսդրական մակարդակում, այնպես էլ՝ փաստացի<sup>10</sup>:

Ինչպես վերև արդեն հիմնավորվել է հանրային իշխանության սուբյեկտների կողմից անձանց իրավունքների և ազատությունների (այդ թվում՝ ՀՀ Սահմանադրությամբ և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով ամրագրված հիմնական իրավունքների) խախտման հետևանքով կրած զրկանքների և կորուստների վերաբերյալ՝ պատճառված վնասի դիմաց հասուցում ստանալը հանդիսանում է խախտված իրավունքների պաշտպանության (վերականգնման) միջոցներից մեկը, հետևաբար՝ այն ընդգրկվում է Կոնվենցիայի 13-րդ հոդվածի կարգավորումների շրջանակի մեջ: Սա իր հերթին նշանակում է, որ ՀՀ Սահմանադրության 62-րդ հոդվածը մեկնաբանելիս պետք է հաշվի առնել նաև Կոնվենցիայի 13-րդ հոդվածի վերաբերյալ ՄԻԵԴ-ի ձևավորած պրակտիկան:

Միլվերն ընտեմ Միացյալ Թագավորություն գործով 1983 թվականի մարտի 23-ին կայացված վճռով ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ ներպետական մակարդակում իրավունքի պաշտպանության միջոց ունենալն ենթադրում է ինչպես պատկան մարմնի կողմից անձի ներկայացրած պահանջի որոշումը (determination of a claim), այնպես էլ այդ պահանջի իրավաչափ լինելու դեպքում խախտված իրավունքի վերականգնման տրամադրումը<sup>11</sup>:

Զինանն ընդեմ Միացյալ Թագավորության գործով 2001 թվականի ապրիլի 03-ին կայացված վճռով Եվրոպական դատարանը նշել է հետևյալը.

«... հարց է ծագրում՝ արդյո՞ք 13-րդ հոդվածը այս համատեքստում պահանջում է, որ փոխառությունը լինի հասանելի: ... դատարանը գտնում է, որ Կոնվենցիայի հիմնարար դրույթներ դիտարկող 2-րդ և 3-րդ հոդվածների խախտման դեպքում դրանց բխող ոչ նյութական վնասի դիմաց հասուցման տրամադրումը պետք է լինի հասանելի՝ որպես

իրավունքի պաշտպանության հնարավոր միջոցների շրջանակի մի մաս:

Դատարանն այս գործով եզրակացնում է, որ բողոքարերը պետք է իրեն, իսկ մինչև իր որդու մահը նաև վերջինիս, պատճառված ոչ նյութական վնասի դիմաց փոխառության պահանջ ներկայացնելու հնարավորություն ունենա:

Պողոսյանը և Բաղդասարյանն ընդդեմ Հայաստանի գործով 2012 թվականի հուլիսի 12-ի վճռով Եվրոպական դատարանը նույնպես անդրադարձել է հանրային իշխանության գործունեության ընթացքում պատճառված վնասի հասուցման հիմնահարցերին:

**ՄԻԵԴ-ը նշված գործով արձանագրել է հետևյալը.**

«... 43. Դատարանը կրկնում է, որ Կոնվենցիայի մեկ այլ դրույթի փաստացի խախտման առկայությունը չի կարող հանդիսանալ որպես 13-րդ հոդվածի կիրառման նախապայման: 13-րդ հոդվածը երաշխավորում է ներպետական մակարդակում իրավունքի պաշտպանության այնպիսի միջոցի հասանելիությունը, որն ունակ է կենսագործելու Կոնվենցիայի իրավունքների և ազատությունների բովանդակությունը՝ անկախ ազգային իրավական համակարգում դրանց ամրագրման ձևից: Հետևաբար՝ 13-րդ հոդվածի կիրառման համար անձին բավարար է ունենալ Կոնվենցիայի իմաստով վիճելի պահանջ:

44. Դատարանը նշում է, որ ոստիկանների կողմից դիմումատուին ցուցաբերած վատ վերաբերմունքի փաստը միանշանակ հաստատվել է ազգային դատարանների, այն է՝ Լոռու մարզի առաջին ասյանի դատարանի 2005թ. հունիսի 15-ի դատավճռով, որով դատապարտվել են գործով անցնող երկու ոստիկանները:

45. ...դիմումատուն առանձին դատավարական կարգով ներկայացրել է փոխառության քաղաքացիական հայց, այդ թվում՝ նաև վատ վերաբերմունքի համար....:

Այնուամենայնիվ, ոչ նյութական վնասի հասուցում դիմումատուին չի տրվել, քանի որ փոխառության այդ տեսակը նախատեսված չի եղել ազգային օրենսդրությամբ:

46. Հետևաբար՝ հարց է առաջանում, թե արդյո՞ք այս համատեքստում 13-րդ հոդվածը պահանջում է, որպեսզի տրամադրվի նման փոխառություն: Դատարանն, իր հերթին, որոշ գործերով արդարացի փոխառություն է շնորհում՝ ճանաչելով ցավը, սբրեսը, անհանգստությունը և հիասքափությունը որպես ոչ նյութական վնասի փոխառության տրամադրում պետք է լինի հասանելի՝ որպես

վճռել է, որ Կոնվենցիայի ամենակիմնարար դրույթների՝ 2-րդ և 3-րդ հոդվածների խախտման հետևանքով առաջ եկող ոչ նյութական վնասի փոխհատուցումը սկզբունքորեն պետք է հասանելի լինի հնարավոր պաշտպանության միջոցների շարքում:

47. Տվյալ գործով Դատարանը գալիս է այն եղանակացության, որ դիմումատուն պետք է հնարավորություն ունենար դիմելու վատ վերաբերունքի հետևանքով կրած ոչ նյութական վնասի փոխհատուցմանը: Եվ, քանի որ Հայաստանի օրենսդրությունը նման փոխհատուցում չի տրամադրում, ուստի դիմումատուն գրկված է եղել արդյունավետ պաշտպանության միջոցից:

48. Հետևարար՝ տեղի է ունեցել Կոնվենցիայի 13-րդ հոդվածի խախտում»:<sup>13</sup>

Այս վճռից կարելի է հստակ եզրակացնել, որ ներպետական նակարդակում հանրային իշխանության կողմից պատճառված վնասի հատուցման հնարավորություն ունենալը դիտվում է, որպես իրավունքի պաշտպանության միջոց ունենալու, այլ ոչ ընդամենն իրավախախտի նկատմամբ ձևավորված նյութաիրավական պահանջի իրավունք:

Իրավունքի պաշտպանության միջոց ունենալը հանգում է խախտված իրավունքների վերականգնմանը հասնելու փաստացի հնարավորության ապահովմանը: Ներպետական նակարդակում այդ հնարավորությունը պետք է տրամադրվի վիճելի ցանկացած պահանջի դեպքում՝ անկախ իրավունքի խախտման փաստը հաստատված լինելու հանգամանքից:

Կոնվենցիայի 41-րդ հոդվածի համաձայն՝ եթե ՍԻԵՂ-ը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանագրվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա ՍԻԵՂ-ը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել:

Այս նորմը ևս մեկ անգամ գալիս է փաստելու, որ հանրային իշխանության կողմից կոնվենցիոն իրավունքների խախտման դեպքում դրանց պաշտպանության միջոցներից մեկն է հանդիսանում այդպիսի խախտմամբ պատճառված վնասի հատուցումը, հետևարար՝ անձինք այդպիսի դեպքերում պետք է օժտված լինեն փոխհատուցում ստանալու հնարավորությունից:

Հիշատակված նորմից հետևում է, որ ՍԻԵՂ-ն ինքը կարող է փոխհատուցում տրամադրել տու-

ժամ կողմին միայն այն դեպքում, եթե պետությունը ձախողել է ազգային մակարդակում նրան տրամադրել պաշտպանության անհրաժեշտ այնպիսի միջոցներ, որոնք բավարար կիմնեին արդյունավետ կերպով խախտված իրավունքը վերականգնելու համար:

Կոնվենցիան և դրա հիմքի վրա ստեղծված դատարանը, իրենց իրավապաշտպան առաքելությունն իրականացնելիս, առաջնորդվում են դատարանի սուրպիդիարության սկզբունքով: Սա նշանակում է, որ հիմնական, որոշիչ օղակը, որից առաջին հերթին կախված է մարդու իրավունքների պաշտպանությունը, հանդիսանում է ազգային դատարանը, որը օժտված է անմիջականորեն պետության ներսում ծագած և ազգային իրավունքի համակարգի պայմաններին և ավանդություններին համապատասխան ձևավորված ներպետական իրավունքի նորմերով կարգավորվող խնդիրները քննելու և լուծելու առավել մեծ իրավասությամբ: Կոնվենցիայի 13-րդ հոդվածը ուշադրություն է դարձնում այն հանգամանքի վրա, որ Եվրոպական դատարանը պահպանում է ազգային մակարդակում իրավունքի պաշտպանության արդյունավետ միջոցների համակարգը բացակայում է կամ փաստացի չի իրացվում<sup>14</sup>:

Վերը նշվածից արդեն պարզ է դառնում Կոնվենցիայի 13-րդ և 41-րդ հոդվածների միջև առկա համակարգային կապը. 13-րդ հոդվածը պարտավորեցնում է պետությանն ազգային մակարդակում ապահովել անձանց խախտված իրավունքների արդյունավետ վերականգնումը (մասնավորապես հանրային իշխանության կողմից պատճառված վնասի հատուցումը), իսկ 41-րդ հոդվածը նախատեսում է դրա տրամարանական շարունակությունը հանդիսացող կարգավորումը, ըստ որի՝ եթե պետությունը ձախողում է 13-րդ հոդվածով նախատեսված իր պողիտիվ պարտականության կատարումը, ապա Կոնվենցիայով նախատեսված մարմինները սեփական գործողություններով են վերականգնում տուժած կողմի իրավունքները:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ ՀՀ Սահմանադրության մեջ հանրային իշխանության կրողների գործողությունների կամ թույլ տված անգործության հետևանքով պատճառված վնասի հատուցման իրավունքի սահմանումը բխում է նաև ազգային մակարդակում վերջիններիս կողմից անձանց խախտված կոնվենցիոն իրավունքներն արդ-

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

յունավետ կերպով վերականգնելու Հայաստանի Հանրապետության կոնվենցիայով ստանձնած պղփառիվ պարտականությունից:

Հաշվի առնելով ՄԻԵԴ պրակտիկան՝ գտնում ենք, որ մայր օրենքի 62-րդ հոդվածով ամրագրված վնասի հատուցման իրավունքի սահմանադրախրավական բովանդակությունն առավել ընդգրկուն կերպով բացահայտում է քննարկվող հարցի վերաբերյալ վերը հիշատակված երկրորդ մոտեցումը: Վնասի հատուցման սահմանադրավական իրավունքի բովանդակությունը ավելի լայն է և իր մեջ կլանում է այն մոտեցումը, ըստ որի՝ քննարկվող իրավունքը հանգում է իրավախախտի նկատմամբ փոխհատուցում վճարելու վերաբերյալ նյութաիրավական պահանջ ունենալուն:

Ամփոփելով ասվածը՝ արձանագրենք, որ վնասի հատուցման իրավունքի սահմանադրախրավական բովանդակությունը հանգում է նրան, որ ի հակադրումն այս իրավունքի՝ պետության վրա դրվում է այղիտիվ պարտականություն՝ ստեղծել ներպետական մակարդակում նյութաիրավական և վարութային բնույթի այնպիսի մեխանիզմներ, որոնց կիրառումը ողջամտորեն կարող է և պետք է անձանց համար ապահովի պատճառված վնասի դիմաց հատուցման ստացումը: ՀՀ Սահմանդրության 62-րդ հոդվածով նախատեսված վնասի հատուցման իրավունքը վերաբերում է անձի համար իրավունքի պաշտպանության համապատասխան միջոցի հասանելիությանը:

<sup>1</sup> Հ.С. Մալеин Возмещение вреда, причиненного личности. М. 1965, С. 5.

<sup>2</sup> Գրիգոր Բերմեզյան «Արտապայմանագրային հարաբերություններ», Երևան, ԵՊՀ իրատարակչություն, 2009, էջ 14:

<sup>3</sup> Walter van Gerven, Jeremy Lever, Pierre Larouche. "Tort law", Oxford and Portland, Oregon, Hart Publishing, 2000., p. 20.

<sup>4</sup> 2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով ՀՀ Սահմանադրություն (<http://www.irtek.am/views/act.aspx?aid=150151>)

<sup>5</sup> Под ред. А.П. Сергеева, Ю.К. Толстого/ Гражданское право: Том 1 Учебник. Издание пятое, переработанное и дополненное.-- “ПБЮМ Л.В Рожников”, Москва 2000 г, С. 295.

<sup>6</sup> ՀՀ քաղաքացիական օրենսգիրը (ընդունված 1998 թվականի մայիսի 5-ին) (<http://www.irtek.am/views/act.aspx?aid=150151>)

<sup>7</sup> Agbor AA “Pursuing the Right to an Effective Remedy for Human Rights Violation in Cameroon: The Need for Legislative Reform” PER / PELJ 2017(20) - DOI <http://dx.doi.org/10.17159/1727-3781/2017/v20i0a1764>, p. 10.

<sup>8</sup> Jacobs, White, and Ovey, 2010. The European Convention on Human Rights. 5th edition. New York: Oxford University Press, p. 131-132.

<sup>9</sup> Pieter van Dijk, Fried van Hoof, Arjen van Rijn and Leo Zwaak (eds.), Theory and Practice of the European Convention on Human Rights. 4th edition. Antwerpen-Oxford: Intersentia, 2006, p.999.

<sup>10</sup> Jacobs, White, and Ovey, 2010. The European Convention on Human Rights. 5th edition. New York: Oxford University Press, p. 135.

<sup>11</sup> Silver and others v United Kingdom, ECHR, 25 March 1983, para 113, Series A No 61.

<sup>12</sup> Keenan v United Kingdom, no. 27229/95 para 130-131, ECHR 2001-III.

<sup>13</sup> Պողոսյանը և Բաղդասարյանն ընդդեմ Հայաստանի, ո. 22999/06, para 43-48, ECHR 2012.

<sup>14</sup> Под общ. Ред. д. ю. н., проф. В.А. Туманова и д. ю. н., проф. Л.М. Этина. /Комментарий к Конвенции о защите прав человека и основных свобод и практике ее применения -- Издательство НОРМА, Москва, 2002 год, С. 205.

### Օգտագործված գրականության ցանկ

1. Հ.С. Մալеин Возмещение вреда, причиненного личности. М. 1965.
2. Գրիգոր Բերմեզյան «Արտապայմանագրային հարաբերություններ», Երևան, ԵՊՀ իրատարակչություն, 2009 թվական:
3. Walter van Gerven, Jeremy Lever, Pierre Larouche .Tort law, Oxford and Portland, Oregon, Hart Publishing 2000., p.20.
4. 2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով ՀՀ Սահմանադրություն (<http://www.irtek.am/views/act.aspx?aid=150151>)
5. Под ред. А.П. Сергеева, Ю.К. Толстого/ Гражданское право: Том 1 Учебник. Издание пятое, переработанное и дополненное.-- “ПБЮМ Л.В Рожников”, Москва 2000 г, ст. 295.

6. ՀՀ քաղաքացիական օրենսգիրը (ընդունված 1998 թվականի մայիսի 5-ին) (<http://www.irtek.am/views/act.aspx?aid=150151>)
7. Agbor AA “Pursuing the Right to an Effective Remedy for Human Rights Violation in Cameroon: The Need for Legislative Reform” PER / PELJ 2017(20) - DOI <http://dx.doi.org/10.17159/1727-3781/2017/v20i0a1764>, page 10. /Accessed 11.06.2018/.
8. Jacobs, White, and Ovey, 2010. The European Convention on Human Rights. 5th edition. New York: Oxford University Press.
9. Pieter van Dijk, Fried van Hoof, Arjen van Rijn and Leo Zwaak (eds.), Theory and Practice of the European Convention on Human Rights. 4th edition. Antwerpen-Oxford: Intersentia, 2006, p.999.
10. Silver and others v United Kingdom, ECHR, 25 March 1983, para 113, Series A No 61.
11. Keenan v United Kingdom, no. 27229/95 para 130-131, ECHR 2001-III.
12. Պողոսյանը և Բաղդասարյանն ընդդեմ Հայաստանի, ող. 22999/06, պարագաներ 43-48, ECHR 2012.
13. Под общ. Ред. д. ю. н., проф. В.А. Туманова и д. ю. н., проф. Л.М. Этина . / Комментарий к Конвенции о защите прав человека и основных свобод и практике ее применения -- Издательство НОРМА, Москва, 2002.

Արման Գրիգորյան

Ասիստենտ կաֆեդրայի յուրիսպրուդենցիայի  
Եվրոպական համալսարանի կողմէ

#### РЕЗЮМЕ

##### *Проблемы конституционно-правового содержания основного права на возмещение вреда*

Эта статья посвящена конституционному праву на возмещение вреда. В статье была предпринята попытка выявить конституционно-правовое содержание данного основного права и представить правовую связь возникающую из него между публичной властью и лицами, учитывая также соответствующую практику Европейского Суда по правам человека.

**Ключевые слова:** право на средства защиты, право на возмещение вреда, материальный и нематериальный ущерб, первичные и второстепенные права.

Arman Grigoryan

PhD student of the chair of law  
of the European University

#### SUMMARY

##### *The issues of constitutional-legal content of the basic right to compensation*

This article refers to the constitutional right to compensation for damages. An attempt was made to disclose the constitutional-legal content of this fundamental right and present the legal bond between public power and individuals arising from it, taking into consideration the practice of the European Court of Human Rights concerning the abovementioned issue.

**Key words:** right to remedy, right to compensation, pecuniary and non-pecuniary damages, primary secondary rights.

Բնագիրը ներկայացվել է 15.06.2019թ.

Ընդունվել է տպագրության 09.07.2019թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության իրավաբանական գիտությունների  
թեկնածու, դոցենտ Թ. Չարարյանը

## ԱՆՍԱՄԿՐՈՑՎԱՆ

Երևանի պետական համալսարանի իրավագիտության  
ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի ամբիոնի  
ասպիրանտ

### ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԻՐԱՎՈՒՔԻ ԻՆՔԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Գիտական հոդվածում քննարկվում են քաղաքացիական հարաբերություններում իրավունքի ինքնապաշտպանության պայմանները: Անդրադարձ է կատարվել իրավունքի ինքնապաշտպանության քաղաքացիական բովանդակությանը, օրենսդրական դրույթների վերլուծությանը, ինքնապաշտպանության ինստիտուտի քաղաքացիական ընկալմանը:

*Հիմնարարեր-քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանություն, ինքնապաշտպանության պայմաններ, ինքնապաշտպանության բովանդակություն:*

Քաղաքացիական հարաբերություններում իրավունքի ինքնապաշտպանության ինստիտուտի կիրառելիության ապահովումը մեծապես պայմանավորում ենք օրենսդրական դրույթների ամբողջականությամբ և հասանելիությամբ: Ինքնապաշտպանության ինստիտուտի իրավական նախադրյալներն ունեն գիտագործնական կարևոր նշանակություն: Մեր կողմից կատարված ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ քաղաքացիական հարաբերություններում իրավունքի ինքնապաշտպանության ինստիտուտի ոչ հստակ և ոչ լիարժեք օրենսդրական ամրագրումը հանգեցնում է ինստիտուտի ոչ ամբողջական ընկալմանն ու կիրառմանը:

Օրինականության պահպանման և ինքնապաշտպանության օրինական սահմանների նշագծման համար հոդվածում քննարկման առարկա ենք դարձնելու քաղաքացիական ինքնապաշտպանության պայմանները և հատկանիշները՝ անդրադարձ դրանց իրավաչափությանը և սահմանագույնման դեպքում առաջացող իրավական հետևանքներին:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 16-րդ հոդվածը ամրագրում է անձի ինքնապաշտպանության իրավունքը՝ միաժամանակ մատնանիկ նաև դրա համաշափության և խախտման համար անհրաժեշտ գործողությունների սահմաններից դուրս չգալու պահանջը:

Քաղաքացիական օրենսդրության բովանդակությունից բխում է, որ՝

- քաղաքացիական հարաբերություններում, որպես իրավաչափության պարտադիր պայման, խոսվում է նաև այն հանգամանքի մասին, որ ինքնապաշտպանության եղանակները

պետք է համաշափ լինեն իրավունքի խախտմանը և դուրս չգան խափանման համար անհրաժեշտ գործողություններից: Օրենսդրությունը, տալով ինքնապաշտպանության իրավաչափության պայմաննը, նպատակ է հետապնդում ապահովել դրա օրինական կիրարկումը: Ինքնապաշտպանության իրավաչափությունը պայմանավորված պետք է լինի նախ և առաջ ինքնապաշտպանվողի իրավաչափ նպատակով: Այն պետք է միտված լինի ոչ թե իրավախախտի իրավունքները խախտելուն, այլ՝ սեփական իրավունքների պաշտպանության իրականացմանն ու օրինական շահերի ապահովմանը: Այսինքն, իրավունքի պաշտպանությունը ոչ թե իրավունքի շարաշահման դրսնորում պետք է լինի, այլ պետք է ուղղված լինի իրավահարաբերությունների բնականոն ընթացքի վերականգնմանը:

• Օրենսգրքի 16-րդ հոդվածի դրույթը մատնանշում է այն սահմանները, որոնք իրավական թույլատրելիության շրջանակներում են. ուղղակիորեն սահմանում է նաև անթույլատրելին և ուրվագծում անօրինական վարքագիծը: Չնայած այն հանգամանքին, որ քաղաքացիական օրենսդրությունը ամրագրում է քաղաքացիական իրավահարաբերություններում ինքնապաշտպանության համաշափության և անհրաժեշտ գործողությունների սահմանների նշանողը, այն, միևնույն է, ամբողջական չէ: Հոդվածը բացի համաշափության և անհրաժեշտ գործողությունների սահմանների մասին հիշատակումից այլևս որևէ հստակեցում չի պարունակում:

Մայրամաքային իրավունքի համակարգում, քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանության շրջանակների տարալուծված լինելու հանգամանքը մեծապես պայմանավորում ենք

ինքնապաշտպանության իրականացման համար իրավական իիմնավորումների և ձևակերպումների անհրաժեշտության բացակայությամբ: Ներպետական դատական ասյանների սակավաթիվ անդրադարձերը հնարավորություն չեն տալիս վերլուծություն անելու իրավաչափության պայմանների վերաբերյալ, սակայն նույնանման իրավական համակարգեր ունեցող այլ երկրների դատական պրակտիկայի հետ անալոգիա անցկացնելը բույլ է տալիս կատարել որոշակի ընդհանրական դատողություններ՝: Այսպիսով, իրավունքի ինքնապաշտպանության ինստիտուտի հստակեցման, կենսագործունեության պահովման համար, կարծում ենք, որ Օրենսգրքում ոչ միայն իրավաչափությունն է պետք որպես պայման ամրագրել, այլ նաև՝ իրավաչափության տեսանելի պայմանները: Մասնավորապես, Օրենսգրքում իրավաչափության պայմաններ կարելի է համարել՝

1. Կոնկրետ խախտման առկայությունը կամ իրավասու անձի համար դրա բարձր հավանականությունը:

2. Այդ իրավախախտման վերացման համար անհրաժեշտ միջոցների կիրառումը, որոնք համարում կլինեն իրավախախտման բնույթին:

3. Քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանությունն իրավասու են իրականացնել քաղաքացիական իրավունքի սուբյեկտներից, միայն ֆիզիկական անձինք:

Ի տարրերություն վերը շարադրված հետևողությունների, որոնք ուղղակիորեն բխում են քաղաքացիական օրենսդրության շարադրանքից, վերջին հետևողությունն ունի լրացուցիչ իիմնավորումների կարիք:

Օրենսգրքի 16-րդ հոդվածում օգտագործվող «անձ» եզրույթը որևէ նշում չի պարունակում միայն ֆիզիկական անձանց վերաբերելի լինելու հանգամանքի մասին: Սակայն, քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանության ինստիտուտի առանձնահատկությունները հաշվի առնելով՝ «անձ» եզրույթը վերագրում ենք բացառապես ֆիզիկական անձանց: Այս հետևողությանը հանգում ենք ինչպես տեսական, այնպես էլ՝ դատական պրակտիկայի համակողմանի վերլուծության արդյունքում:

Քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանության իրականացումը և եղանակների ընտրությունը վերապահված է իրավասու անձին, և օրենսդրությունը, այս առողմով, լրացուցիչ կարգավորումներ չի նախատեսում: Տեսական իիմնավորումները բույլ են տալիս հանգել որոշ եզրակացությունների: Մասնավորապես, տեսաբաններ Գրի-

բանովը, Ստրատինինգը, Դենիսովը, Սովսանովը, իրենց աշխատություններում անդրադառնալով ինքնապաշտպանության իրականացման եղանակների խնդրին, նշում են, որ քաղաքացիական ինքնապաշտպանության իրականացումը քաղաքացիական իրավունքի այլ ինստիտուտներից տարրերվում է նաև ֆիզիկական ներգործության փաստացի հնարավորությամբ: Որպես ինքնապաշտպանության եղանակներ վառ ապացույց են դիտարկվում անհրաժեշտ պաշտպանությունն ու ծայրահեղ անհրաժեշտությունը: Իրավաբանական անձի կողմից անհրաժեշտ պաշտպանության և ծայրահեղ անհրաժեշտության իրականացման նախադրյալները սահմանված չեն, այսինքն՝ իրավաբանական անձի կողմից ձեռնարկված գործողությունները պետք է ունենան ոչ թե փաստացի, այլ՝ իրավական հենք՝ պայմանավորված դրանց իրավական բնույթով: Իսկ անհրաժեշտ պաշտպանության կարելոր հատկանիշներից է հանդիսանում փաստացի գործողությունների կատարումը, որոնք, շատ հաճախ, իրավական հետևանք չեն առաջացնում<sup>4</sup>:

Համակարծիք լինելով հեղինակների այս տեսակետին՝ ցանկանում ենք ավելացնել, որ ինքնապաշտպանությունը օպերատիվ ներգործության և պարտավորությունների կատարումն ապահովող միջոցներից տարրերվում է նաև իր առավել սահմանափակ սուբյեկտային կազմով: Հետևաբար, իրավաբանական անձանց կողմից իրավունքների պաշտպանությանն ուղղված համանման գործողությունները կատարվում են ոչ թե ինքնապաշտպանության ինստիտուտի, այլ՝ օպերատիվ ներգործության միջոցների շրջանակներում:

Ինքնապաշտպանության ինստիտուտի յուրօրինակ դրսերումներ առկա են նաև քաղաքացիական օրենսդրության բաղկացուցիչ մասը կազմող հարևանային իրավունքում: Թույլատրելի ազդեցության, վիճելի սահմանի, սահմանակից կառույցների ընդհանուր օգտագործման վերաբերյալ կարգավորումների, և դրանց խախտման դեպքում անձանց համարժեք գործողությունների բնույթին անդրադարձ կատարելու համար անհրաժեշտ են լրացուցիչ ուսումնասիրություններ:

ՀՀ քաղաքացիական օրենսդրության տրամադրանությամբ է կազմված նաև ԱՊՀ երկրների համար նախատեսված մողելային քաղաքացիական օրենսգիրքը<sup>5</sup>: Այն ևս ամրագրում է ինքնապաշտպանության քաղաքացիական իրավաբորությունը և համանուն վերտառությամբ հոդվածում օգտագործվում է «անձ» եզրույթը: Ըստ էության, հոդվածի բովանդակությունը բույլ չի տալիս համ-

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

գելու նրան, որ խոսքը գնում է բացառապես ֆիզիկական անձանց մասին: Սակայն, իրավագետները, որոնք ուսումնասիրել են քաղաքացիափական հարաբերությունների այս շրջանակը, նշում են, որ ինքնապաշտպանության իրականացման եղանակների ընտրության շրջանակի անկանխատեսելիությունը հենց փաստում է ֆիզիկական անձի կողմից փաստացի գործողությունները ձեռնարկելու հանգանանքը<sup>6</sup>: Կիսելով այս տեսակետը՝ մենք կարծում ենք, որ իրավաբանական անձանց և քաղաքացիափական այլ սուբյեկտների համար, այդ թվում, նաև ֆիզիկական անձանց, քաղաքացիական օրենսդրությունը նախատեսում է այլ իրավական հնարավորություններ իրավունքների խախտումների դեպքերի համար, օրինակ՝ օպերատիվ ներգործության միջոցները: Բացի այդ, ֆիզիկական անձի առանձնահատկություններով պայմանավորված, սահմանվում է նաև իրավաչափ ֆիզիկական ներգործությունը, այն է՝ ինքնապաշտպանությունն իր հնարավոր դրսորման եղանակներով: Հարկ ենք համարում շեշտել նաև, որ հեղինակներն իրենց աշխատություններում ինքնապաշտպանության մասին խոսելիս օգտագործում են «քաղաքացի» բնորոշումը, ինչը ևս հիմք է տալիս, իրավացիորեն, կարծելու, որ խոսքը ֆիզիկական անձանց մասին է:

Հարկ է անդրադարձ կատարել նաև պետության և համայնքի կողմից ինքնապաշտպանության կիրառման հնարավորությանը: Գաղտնիք չէ, որ պետությունը քաղաքացիափական հարաբերություններին մասնակցում է այլ սուբյեկտների հետ հավասար իրավունքների և պարտականությունների ծավալով՝ բացառությամբ կոնկրետ սահմանված դեպքերի:

Հաշվի առնելով այն հանգանանքը, որ համայնքի և պետության բացառիկ իրավասությունների շրջանակներում նրանց կողմից ձեռնարկված գործողությունները զուգորդվում են՝ կողմերի համար իրավական հետևանքներ առաջացնելով, կրում են բացառապես իրավական ասպեկտ և չեն կարող զուգորդվել ֆիզիկական փաստացի գործողություններով, ապա ինքնապաշտապության իրականացման հնարավորությունը կարծեն նվազում է: Այսինքն, ինքնապաշտպանության կիրառման տեսական հնարավորությունը հակասության մեջ կլինի պետության (համայնքի) գործառնությունների հետ:

Իրավունքների ինքնապաշտպանությունը հանդիսանում է քաղաքացիական իրավունքների պաշտպանության համակարգի անբաժանելի մաս:

Իրավունքների ինքնապաշտպանությունը ըն-

դունված է դասել ոչ իրավական պաշտպանության ձևերի շարքին: Այս տարածատումը, թերևս, տրամաբանական կարելի է համարել այն տեսանկյունից, որ ինքնապաշտպանության ձեռնարկումը չի պայմանավորվում որևէ լիազորությամբ օժտված մարմնի համագոր գործողություններից և դրա կատարումը պայմանավորված է բացառապես սուբյեկտի կամահայտնությամբ՝ իր սուբյեկտիվ իրավունքներն իրականացնելու նպատակով: Իրավունքի ինքնապաշտպանության կիրառումը որևէ կերպ չի երկրորդում կամ բույլատրելի համարվում խախտումն արձանագրելուց կամ իրավասու մարմնի կողմից կոնկրետնա գործողությունների կատարումով: Այն բացառապես ինքնապաշտպանության ակտիվ սուբյեկտի (իրավախախտի) կամարտահայտմամբ պայմանավորված իրավական երևույթ՝ միտված իրավահարաբերությունների բնականոն ընթացքի, ցանկալի վերջնարդյունքին հասնելու ապահովմանը: Ինքնապաշտպանության փաստացի և իրավական հետևանքների միջև գոյություն ունեցող տարբերությունը և նպատակը ևս հանդիսանում են դրա ոչ իրավական պաշտպանության ձև:

Արարքն ինքնապաշտպանություն որակելու համար անհրաժեշտ է երեք պայմանների միաժամանակյա առկայություն:

1. Ինքնապաշտապությունն իրականացվում է իրավագոր անձի կողմից: Այսինքն՝ նա հանդիսանում է խախտված իրավունքի կրողը և միայն նա է իրավասու դիմելու ինքնապաշտպանության<sup>9</sup>:

2. Արարքի համաշափությունը խախտված իրավունքի բնույթի հետ կարևորագույն նախապայման է, քանի որ ինքնապաշտպանության քողի ներքո ձեռնարկված ոչ բոլոր գործողություններն են համարվում իրավաչափ: Օրինակ՝ սեփականատիրոջ կողմից իր բազմամյա տնկինների պահպանության համար իրազենի կիրառումը համաշափ համարվել չի կարող<sup>10</sup>:

3. Ինքնապաշտպանության սահմանազանցումն անհրաժեշտ երրորդ բաղադրիչն է: Այն ապահովում է ինքնապաշտպանության ինքնանպատակ չիննելու հանգանանքը: Խախտված իրավունքի կրողը պիտի նպատակ ունենա վերկանգնելու խախտված իրավունքն ու իրավահարաբերությունների բնականոն ընթացքը. այն չպետք է լինի իրավահարաբերության մյուս մասնակցին վնաս պատճառելու նպատակադրումով<sup>11</sup>:

Այս երեք նախապայմաններից որևէ մեկի բացակայությունը վերացնում է արարքը իրավունքի ինքնապաշտպանության տիրույթում դիտարկելու փաստը և իրավահարաբերության մյուս սուբյեկտի

մոտ առաջացնում փոխհատուցում պահանջելու և քաղաքացիական իրավունքով նախատեսված այլ միջոցներից օգտվելու հնարավորությունը:

Իրավաբանական գրականության մեջ տարածված է այն կարծիքը, որ քաղաքացիական իրավունքների և օրինական շահերի ինքնապաշտպանությունը՝ լայն իմաստով, կարող են դիտարկել անձի ցանկացած գործողությունները, որոնք ուղղված են նրա իրավունքների պաշտպանությանը: Է. Լ. Ստրաունինի կարծիքով՝ ինքնապաշտպանության՝ լայն իմաստով, դրսորում կարող է համարվել քաղաքացիական հարաբերությունների դրսորած գործողությունների մեծամասնությունը<sup>12</sup>: Օրինակ՝ չափահաս գործունակ անձի կողմից առողջական խնդիրների պատճառով օրինական շահերի և իրավունքների իրականացման նպատակով նրա նկատմամբ սահմանվելիք հոգաբարձությունը կարող է դիտարկվել ինքնապաշտպանության շրջանակներում լայն իմաստով կիրառելիության դեպքում: Տեսաբանն ինքնապաշտպանություն է դիտարկում նաև հայցի ներկայացումը, վարչարարության մարմիններին դիմելը, պայմանագրի կետերի փոփոխությունը, նաև ինքնուրույն իրականացված գործողությունները, որոնց նպատակը սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությունն է:

Եթե առաջնորդվենք վերը նշված հեղինակի իմնավորումներով ու մոտեցումներով, ապա կրախվենք մի իրավիճակի, երբ քաղաքացիաիրավական հարաբերությունները, եթե ոչ ամբողջական ծավալով, ապա այդ իրավահարաբերությունների մեծ մասը կրիտվի որպես ինքնապաշտպանություն՝ հետևյալ հանգանամքներով պայմանավորված: Քաղաքացիաիրավական հարաբերությունների գերակշիռ մասը ծագում է կամքի ձևափրման և կամարտահայտման հիման վրա: Ինքնապաշտպանության կիրառումը ևս պայմանավորված է կամքի դրսորմամբ: Քաղաքացիաիրավական հարաբերություններն իրականացվում են իրավունքի սուբյեկտների կողմից, ինչն էլ բնորոշ է քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանությանը: Սակայն, վերը բվարկած ընդհանրությունները, մեր կարծիքով, ոչ թե ամրապնդում են այն տեսակետը, որ ինքնապաշտպանությունը գրադեցնում է քաղաքացիավական հարաբերությունների սպեկտրը, այլ միայն ամրապնդում են ինքնապաշտպանությունը քաղաքացիական իրավունքի լիարժեք ինստիտուտ լինելու հանգանամքը: Ինքնապաշտպանության տարանջատման, սահմանազատման և հստակեցման համար, կարծում ենք, այլ չափորոշիչներով առաջնորդվելու անհրաժեշտություն

կա:

Մասնավորապես՝ ինքնապաշտպանության բացարիկ հատկանիշ ենք դիտարկում այն հանգամանքները, որ

ա) որպա կիրառելիության համար անհրաժեշտ չէ խախտված իրավունքի ճանաչումը,

բ) ինքնապաշտպանվողի կողմից ձեռնարկվող գործողությունների համար անհրաժեշտ չէ որևէ իրավասու մարմնի ներգրավումը:

